В-одиннадцатых, арабские режимы, вероятнее всего, останутся авторитарными и будут более религиозно нетерпимыми и антиамериканскими. Лидерство останется за двумя государствами – Египтом и Саудовской Аравией. Египет, составляющий одну треть арабского населения мира, внедрил некоторые конструктивные экономические реформы. Однако его политики оказались не в состоянии продолжить их. Напротив, правящий там режим демонстрирует решимость подавить тех немногих либералов, которые есть в стране, и предложить египтянам выбор между традиционным авторитаризмом и мусульманским братством. Опасность заключает-

ся в том, что в один прекрасный день египтяне предпочтут последнее, не потому, что это оно их действительно устраивает, а потому, что они устали от прежней жизни. В качестве альтернативы режим мог бы использовать цвета своих исламских оппонентов, чтобы кооптировать их призывы, дистанцируясь при этом от Соединенных Штатов. В Саудовской Аравии правительство и королевская элита используют сверхдоходы от продажи энергоносителей для успокоения внутренних призывов к изменениям. Проблема заключается в том, что большая часть давления, на которое они реагируют, исходит не от либеральных левых, а от религиозных правых, которые вынудили их включить в повестку дня вопрос о религиозной власти.

Наконец, региональные институты останутся неразвитыми, серьезно отставая от других стран. Самая известная организация Ближнего Востока, Лига арабских наций, не допускает в свои ряды два самых сильных региональных государства – Израиль и Иран. Продолжительный арабо-израильский конфликт будет и дальше препятствовать участию Израиля в любых длительных региональных отношениях. Напряженность между Ираном и большинством арабских государств также будет препятствовать появлению регионализма. Торговля в пределах Ближнего Востока останется умеренной, так как немногие страны предлагают товары и услуги, которые бы в большом количестве захотели приобрести другие, и современные промышленные товары будут поступать из других стран. В эту часть мира дойдут немногие из преимуществ глобальной экономической интеграции, несмотря на насущную потребность в них.

Ошибки и возможности

Хотя основные особенности нынешней, пятой эры Ближнего Востока весьма непривлекательны, это не должно стать поводом для фатализма. Многое зависит от степени. Есть фундаментальная разница между отсутствующими формальными ближневосточными мирными соглашениями и тем, что характеризуется терроризмом, межгосударственным конфликтом и гражданской войной; тем, где находится могущественный Иран, и тем, над чем господствует Иран, или между тем, кто имеет непростые отношения с Соединенными Штатами, и тем, кто полон ненависти к этой стране. Время также приводит к изменениям. Эры на Ближнем Востоке могут быть длительными, как столетия, или же столь короткими, как полтора десятилетия. Очевидно, что в интересах Соединенных Штатов и Европы, чтобы намечающаяся эра была по возможности короткой и чтобы последующая была мягче.

Чтобы гарантировать это, политические лидеры США должны избежать двух ошибок, и при этом использовать две возможности. Первой ошибкой может быть чрезмерная уверенность в военной силе. Поскольку Соединенные Штаты узнали огромную цену этой силы в Ираке, а Израиль – в Ливане, вооруженные силы не являются панацеей. Они не очень эффективно действуют против организованных военных группировок и террористов, которые хорошо вооружены, признаваемы местным населением и готовы на смерть ради своих целей. Превентивные удары по иранским ядерным объектам не приведут ни к чему хорошему. Более того, атака не только может не разрушить все установки, но и спровоцировать Тегеран к воссозданию своей программы в более завуалированной форме, заставить иранцев сплотиться вокруг режима и склонить Иран к принятию ответных мер (скорее всего, посредством своих «представителей») против интересов Соединенных Штатов в Афганистане и Ираке и, возможно, непосредственно против США. Это приведет к дальнейшей радикализации арабского и мусульманского мира и еще большему разрастанию терроризма и антиамериканской деятельности. Военная акция против Ирана приведет также к новому повышению цен на нефть, увеличивая вероятность международного экономического кризиса и глобального спада.

Второй ошибкой будет ставка на демократию для умиротворения региона. Верно, что устоявшиеся демократии не склонны вести войну друг с другом. К сожалению, создание зрелых демократических государств – нелегкая задача: даже если усилия в этом направлении в конечном итоге приводят к успеху, этот процесс длится десятилетиями. Тем временем правительство Соединенных Штатов должно продолжать работать со многими недемократическими пра-

вительствами. Демократия – это и не ответ на терроризм. Предполагается, что достигшие совершеннолетия молодые мужчины и женщины не станут террористами, если они будут принадлежать к обществам, которые предоставляют им политические и экономические возможности. Однако недавние события показали, что даже те, кто вырос в устоявшемся демократическом государстве типа Великобритании, не защищены от натиска радикализма. Тот факт, что *Хамас* и *Хизбалла* победили на выборах, после чего предприняли интенсивные атаки, подтверждает мысль о том, что демократические реформы не гарантируют спокойствия. От демократизации мало пользы, когда имеешь дело с радикалами, чьи политические позиции имеют мало шансов на получение поддержки большинства. Более действенными инициативами будут действия, направленные на реформирование образовательной системы, продвижение либерализации экономики и открытого рынка, поощрение арабских и мусульманских властей высказываться таким образом, чтобы не узаконивать терроризм и пристыдить его сторонников, обращаться к истокам обид, толкающих молодых мужчин и женщин на путь терроризма.

Что касается представляющихся возможностей, то, во-первых, следует чаще вмешиваться в ближневосточные дела, используя невоенные методы. В вопросе Ирака, в дополнение к лубым передислокациям американских войск и обучению местных вооруженных сил и полиции, Соединенные Штаты должны создать региональный форум для соседей Ирака (в частности, для Турции и Саудовской Аравии) и других заинтересованных сторон, подобно тому форуму, который помог управлять событиями в Афганистане после интервенции в 2001 году. Поступая таким образом, необходимо привлечь к этому процессу Иран и Сирию. Нужно убедить Сирию, способную повлиять на поток боевиков в Ирак и оружия в Ливан, закрыть свои границы в обмен на экономические выгоды (от арабских правительств, Европы и Соединенных Штатов) и обязательство начать переговоры по статусу Голанских высот. В новом Ближнем Востоке есть опасность, что Сирия может быть больше заинтересована в работе с Тегераном, чем с Вашингтоном. Однако эта страна присоединилась к коалиции во главе с США во время войны в Персидском заливе и присутствовала на Мадридской мирной конференции в 1991 году – два поступка, которые предполагают, что она может вести дела с Соединенными Штатами в будущем.

В случае с Ираном ситуация сложнее. Поскольку смена режима в Тегеране не является перспективой ближайшего времени, военные удары по ядерным объектам Ирана опасны, а их сдерживающий эффект вызывает сомнение, то дипломатия – лучшая доступная для Вашингтона альтернатива. Правительство Соединенных Штатов должно без каких-либо предварительных условий начать всесторонние переговоры по иранской ядерной программе и поддержке иностранных вооруженных группировок. Ирану следует предложить ряд экономических, политических льгот и гарантии безопасности. Можно позволить ему весьма ограниченную пилотную программу по обогащению урана до тех пор, пока он соглашается на крайне тщательные инспекции. Такое предложение завоевало бы международную поддержку, вздумай США выступить с предложением о санкциях в отношении Ирана, эскалация же других вариантов приведет к провалу американской дипломатии. Использование же упомянутых методов увеличивает шансы дипломатии на успех. Иранский народ должен узнать цену, которую ему придется заплатить за радикальную внешнюю политику своего правительства. В такой ситуации вероятность того, что незаинтересованное в неблагоприятной общественной реакции правительство в Тегеране согласится на предложения Соединенных Штатов, резко возрастет.

Нуждаются в оживлении также дипломатические усилия в израильско-палестинском конфликте, который все еще является проблемой, в наибольшей степени формирующей (и радикализирующей) общественное мнение в регионе. Цель, в данном случае заключается не в том, чтобы привести стороны в Кэмп-Дэвид или куда-нибудь еще, а в том, чтобы приступить к созданию таких условий, при которых возможно возобновление переговорного процесса. США должны четко сформулировать те принципы, которые, по их мнению, могут составить элементы окончательного урегулирования, включая создание Палестинского государства, базирующегося в пределах границ 1967 года. (Границы должны быть установлены так, чтобы гарантировать безопасность Израиля и отражать демографические изменения, а палестинцам должны

быть компенсированы любые потери, вытекающие из корректировки линий.) Чем щедрее и детальнее план, тем сложнее будет для *Хамас* отклонение переговоров и поддержка конфронтации. Наряду с этим, власти Соединенных Штатов должны сесть за стол переговоров с лидерами *Хамас*, как они в свое время сделали с *Шинн Фейн*, некоторые члены которой возглавляли Ирландскую республиканскую армию. Такие изменения должны рассматриваться не в качестве воздания должного террористической тактике, а как механизмы, потенциал которых приведет процесс в соответствие с американской политикой.

Вторая возможность касается способов максимального изолирования Соединенных Штатов от вероятной нестабильности региона. Это означало бы сдерживание потребления нефти Соединенными Штатами и их зависимости от энергетических ресурсов Ближнего Востока – цели, которые могут быть наилучшим образом достигнуты сокращением спроса (скажем, за счет увеличения налогов на выкачивание нефти, возмещенное уменьшением налогов в других сферах, и продвижением политики, которая ускорит введение альтернативных источников энергии). Вашингтон должен также принять дополнительные меры для уменьшения своей уязвимости перед терроризмом. Как и уязвимость в отношении болезней, уязвимость к терроризму не может быть полностью устранена. Однако можно и необходимо сделать гораздо больше для улучшения защищенности американской страны и большей готовности к тем неминуемым случаям, когда террористам удастся добиться успеха.

Избежание перечисленных ошибок и использование указанных возможностей поможет. Однако важно осознать, что для проблем, которые ставятся новой эпохой, нет быстрых и простых решений. Ближний Восток останется беспокойным регионом, который еще десятилетиями будет нас тревожить. Всего этого достаточно, чтобы испытывать ностальгию по старому Ближнему Востоку.

ՌՌԻՍԱՍՏԱՆ-ԵՄ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

2006թ. հոկտեմբերի 9-ին ռուսաստանյան «Գազպրոմ» ընկերության խորհուրդը որոշում ընդունեց սեփական ուժերով, առանց արտասահմանյան ընկերությունների մասնակցության, սկսել գազի արտահանումը Շտոկհոլմի գազի հանքավայրում: Շտոկհոլմի հանքավայրը խոշորագույններից է Ռուսաստանի տարածքում, գտնվում է Բարենցի ծովի ռուսաստանյան հատվածի կենտրոնական մասի շելֆում: Հանքավայրի ընդհանուր պաշարները, ըստ 2006-ի հունվարին ՌԴ կառավարությանը ներկայացրած հաշվետվության, կազմում են 3,7 տրլն մ³ գազ:

«Գազպրոմի» որոշումը կարելի է համարել բեկումնային ռուս-եվրոպական էներգետիկ երկխոսության ոլորտում, եթե հաշվի առնվեն մի քանի կարևոր հանգամանքներ.

1. «Գազպրոմի» սեփական ուժերով հանքավայրի զարգացման ապահովման մասին որոշումը հակասում էր եվրոպական ընկերությունների հետ ձեռք բերված պայմանավորվածություններին: Համաձայն դրանց՝ «Գազպրոմը» 2005-ի սեպտեմբերին հրապարակել էր այն ընկերությունների ցուցակը, ում պատրաստվում էր հրավիրել հանքավայրի զարգացմանը (տեղեկատվությունը հրապարակվել էր ընկերության պաշտոնական կայքում): Դրանք էին նորվեգական «Ստատոյլը» և «Հիդրոն», ամերիկյան «Շևրոն» և «ԿոնոկոՖիլիպսը» և ֆրանսիական «Տոտալը»:
2. «Գազպրոմի» որոշման մեջ հաստիկ ուշադրության է արժանի այն փաստը, որ ընկերությունը նպատակահարմար է համարում Շտոկհոլմից գազի արտահանումը գազատարների միջոցով: Սա, իր հերթին, ևս մեկ կարևոր որոշում է, քանի որ Շտոկհոլմի հանքավայրում եվրոպացիների կողմից պետք է կառուցվեր գազի հեղուկացման գործարան: Ռուսաստանն ինքը սեփական ուժերով տեխնոլոգիապես չի կարող կառուցել նման ձեռնարկություն¹:

Փաստորեն, «Գազպրոմի» որոշումը եվրոպական ընկերություններին զրկում է հնարավորությունից մասնակցել Ռուսաստանի տարածքում գազի ամենախոստումնալի նոր հանքավայրի զարգացմանը՝ սեփականատիրոջ իրավունքով: Ակնհայտ է, որ նույն եվրոպական ընկերությունները զուտ կապալառուի իրավունքներով կհրավիրվեն հանքավայրի մշակմանը (այսպիսի հրավեր, հավանաբար, շուտով կուղղվի Սախալինում «տուժած» «Ռոյալ/Դատչ Շել» ընկերությանը) և գազատարի կառուցմանը, սակայն հանքավայրի միակ սեփականատեր կմնա ռուսաստանյան պետական «Գազպրոմ» ընկերությունը:

Ինչի մասին կարող է վկայել ռուսաստանյան դիրքորոշման կարծրացումը ԵՄ-ի հետ էներգետիկ համագործակցության հարցում, և կարելի է, արդյոք, խոսել ԵՄ-Ռուսաստան էներգետիկ երկխոսության ավարտի մասին:

Նախ՝ անդրադառնանք այն հարցին, թե ինչ է Ռուսաստան-ԵՄ էներգետիկ երկխոսությունը:

Ռուս-եվրոպական էներգետիկ երկխոսության գաղափարն առաջին անգամ հայտնվել է 1986թ. և հնչեցվել է այն ժամանակ Նիդեռլանդների վարչապետ Ռ.Լյուբերսի կողմից, որն առաջարկում էր ԽՍՀՄ-ն ընդգրկել եվրոպական էներգետիկ համակարգի մեջ: Այս մոտեցման և Արևելյան Եվրոպայի Արևմուտքին ինտեգրման անհրաժեշտության արդյունք դարձավ 1991թ. ընդունված էներգետիկ խարտիան, որը 1994թ. ստորագրվեց, սակայն չվավերացվեց Ռուսաստանի կողմից:

¹ Սախալին-2-ի շուրջ ընթացող սկանդալային զարգացումների արդյունքում նվազում է այս գոտում ԱՄՆ-ի կողմից գազի հեղուկացման գործարանի կառուցման հնարավորությունը: Միայն այս գործարանի կառուցման դեպքում Ռուսաստանը հնարավորություն կունենա գազ արտահանել ԱՄՆ: Շտոկհոլմում գազի հեղուկացման գործարանի կառուցումից Ռուսաստանի հրաժարումը խոսում է ռուսաստանյան գազային քաղաքականության մեջ «կոնտինենտալ», «եվրասիական» ռազմավարության հաղթանակի մասին: Սա մեծ հարված կհասցնի ռուս-ամերիկյան էներգետիկ համագործակցության հետագա զարգացմանը:

Բուն էներգետիկ երկխոսության սկզբի հիմքում ընկած է 1997թ. Ռուսաստանի և ԵՄ-ի միջև կնքված Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիրը: Էներգետիկ երկխոսության հիմնական նպատակներն են.

ԵՄ-ի համար

Հաշվի առնելով այն, որ ԵՄ-ում էներգիայի օգտագործումն արագ տեմպերով աճում է, իսկ դրան զուգահեռ՝ սպառվում են Հյուսիսային ծովի պաշարները, ԵՄ-ը առավել քան հետաքրքրված է ռուսաստանյան էներգակիրների հետագա ստացմամբ: ԵՄ ներկայիս էներգետիկ քաղաքականությունը, ընդհանուր առմամբ, կարելի է բնութագրել որպես՝

1. սեփական միջուկային էլեկտրաէներգիայի և նոր էներգետիկ տեխնոլոգիաների ոլորտի զարգացում (արևային, բիոէներգիային և թերմալ),
2. ռուսաստանյան ռեսուրսների հետագա օգտագործում,
3. իրանական և միջինասիական գազի ԵՄ-ին մատակարարման ապահովում:

Այս տեսանկյունից Ռուսաստանի դերը ԵՄ-ի համար բավական կարևոր է, քանզի ՌԴ-ում էներգակիրների արտահանումն ավելանալու է գրեթե այն նույն տեմպերով, որոնցով ավելանալու է էներգակիրների օգտագործումը ԵՄ-ում:

Աղյուսակ

Ռուսաստանում նավթի և գազի արտադրության, ԵՄ արտահանման և ԵՄ-ում սպառման աճը 2000-2020թթ.

	ՌԴ-ՌԴՄ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ 2000-2020ԹԹ.		ՌԴ ԵՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՃԸ 2000-2020ԹԹ.		ԵՄ-ՌԴՄ ՄՊԱՌՄԱՆ ԱՃԸ	
Նավթ	200 մլն տ	60%	32 մլն տ	25%	170 մլն տ	40%
Գազ	150 մլրդ մ ³	25%	31 մլրդ մ ³	23%	300-400 մլրդ մ ³	150-200%

Աղբյուր. Ռուսաստանի էներգետիկ ռազմավարությունը մինչև 2020թ.:

Ակնհայտ է, որ ռուսաստանյան էներգակիրները բավական կարևոր են ԵՄ-ի համար, և այս տեսանկյունից բավական հրատապ է դառնում Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության անկախության սահմանափակումը, որը և կոչված է ապահովելու էներգետիկ խարտիան: ԵՄ-ի համար խարտիայի սկզբունքներից կարևոր են հետևյալները.

1. ՌԴ-ն չպետք է արգելքներ ստեղծի օտարերկրյա ընկերությունների համար՝ ներդրումներ կատարելու նավթի և գազի արտադրության ոլորտում, ինչպես նաև սեփական ուժերով կառուցելու խողովակաշարեր ռուսաստանյան նավթը և գազը ԵՄ արտահանելու համար,
2. ՌԴ-ն զրկվում է ցանկացած իրավունքից (համաձայն խարտիայի 7-րդ հոդվածի)՝ դադարեցնել գազի կամ նավթի մատակարարումը՝ կապված այս կամ այն քաղաքական հիմնախնդրի հետ կամ ֆինանսական կարճաժամկետ անհամաձայնությունների պատճառով (եթե Ռուսաստանը վավերացրած լիներ խարտիան, ապա 2005/2006թթ. ձմռանը Ուկրաինայի գազամատակարարման դադարեցումը կլիներ անհնար):

Ռուսաստանի համար

Ռուսաստանի համար կարևոր է պահպանել ԵՄ հիմնական էներգետիկ մատակարարի դերը: Այսօր, օրինակ, ռուսաստանյան նավթի արտահանման 78, գազի արտահանման ավելի քան 60%-ն ընկնում է ԵՄ երկրների վրա: Ցավոք, Ռուսաստանի համար ռուսաստանյան գազի ոչ եվրոպական հեռանկարային գնորդները (խոսքն առաջին հերթին Չինաստանի մասին է) բավարար գնողունակ չեն: Ռուս-չինական վերջին համաձայնագիրը գազատարի կառուցման մասին չի սահմանում Չինաստանին վաճառվելիք ռուսաստանյան գազի գինը, որը հետագայում, անկասկած, ավելի ցածր կլինի ԵՄ-ին վաճառվող գազի գնից:

Բացի զուտ տնտեսական նշանակությունից, ԵՄ-ը Ռուսաստանի համար նաև կարևոր քաղաքական գործոն է հանդիսանում: ՌԴ՝ էներգետիկ գերտերության վերածման հեռանկարը կախված է հիմնականում ոչ թե նրանից, թե որքան գազ և նավթ է արտադրում Ռուսաս-

տանը, այլ նրանից, թե որքանով է Արևմուտքը կախված ռուսաստանյան նավթից ու գազից: Այս տեսանկյունից, իհարկե, Ռուսաստանի համար կարևոր է էներգետիկ երկխոսության զարգացումը ԵՄ-ի հետ:

Սակայն եվրոպական խաղի կանոնները կարծես թե ընդունելի չեն Ռուսաստանի համար: Մա վերաբերում է հենց էներգետիկ խարտիայի հիմնախնդրին, ավելի ճիշտ՝ նրա հավելվածներից մեկին՝ Տրանզիտային արձանագրությանը: Համաձայն այս փաստաթղթի՝ Ռուսաստանը ստիպված կլինի.

1. Ազատականացնել գազա- և նավթատարների ոլորտը և թույլ տալ արտասահմանյան ընկերություններին օգտվել դրանցից նույն պայմաններով, որոնցով խողովակաշարերն օգտագործվում են ռուսաստանյան ընկերությունների կողմից: Որպես հետևանք՝ Ռուսաստանը ստիպված կլինի վերացնել պետական «Տրանսնեֆտի» և «Գազպրոմի» մենաշնորհը խողովակաշարերի հարցում, որով կվերացվի վերահսկողությունը «նավթային/գազային ընկերություն – եվրոպական սպառող» հարաբերությունների ոլորտում:
2. Չխոչընդոտել երրորդ պետությունների կողմից ռուսաստանյան խողովակաշարերի օգտագործմանը ԵՄ նավթ և գազ արտահանելու համար, բացի դրանից՝ օտար ընկերություններից գազա- և նավթատարների տրանզիտային նպատակներով օգտագործման համար գանձել նույնքան տուրք, որքան սեփական ընկերություններից: Որպես հետևանք՝ Ռուսաստանը կարող է կորցնել վերահսկողությունը Ղազախստանից, Ուզբեկստանից և Ղրղզստանից ԵՄ գազի արտահանման վրա, չնայած այդ արտահանումը կկատարվի բուն ռուսաստանյան տարածքով:

Բոլոր այս առանձնահատկությունները խոսում են այն մասին, որ ՌԴ-ԵՄ էներգետիկ երկխոսությունը էներգետիկ խարտիայի սահմաններում գրեթե զրկված է ցանկացած հեռանկարից:

Մա նշանակում է միայն մեկ բան. Ռուսաստանը կշարունակի մնալ կարևոր մատակարարող ԵՄ էներգակիրների շուկայում, սակայն Ռուսաստանի էներգետիկ քաղաքականությունը կմնա անկախ: Միակ ազդակը, որը կարող է ԵՄ-ի կողմից օգտագործվել ՌԴ-ի վրա ճնշում գործադրելու համար, ԵՄ ներդրումների կասեցումն է Ռուսաստանի էներգետիկ ոլորտում: Սակայն «Գազպրոմի» վերջին որոշումը՝ սեփական ուժերով զարգացնել Շտոկհոլմի հանքավայրը, ինչպես նաև *Սախալին-2*-ի հարցի շուրջ ռուսաստանյան մոտեցման կարծրացումը, խոսում են այն մասին, որ Մոսկվայի վրա եվրոպական ներդրումային ազդակները չեն գործում: Իսկ ԵՄ-ը, հաշվի առնելով էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից, այս ազդակից գատ ուրիշ ճնշման միջոց, անգամ մեծ ցանկության դեպքում, չի կարող գործածել:

Մնակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

ДЖАВАХК В СТЕРЕОТИПНОМ ВОСПРИЯТИИ АРМЯНСКОЙ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ: ПРОБЛЕМЫ И ПОИСКИ РЕШЕНИЙ

Проблема Джавахка в восприятии армянской политической элиты и даже экспертно-аналитического сообщества страдает ярко выраженным налетом стереотипности и наличием четкого «бытового прагматизма». Соответственно, в условиях отсутствия серьезного обсуждения проблемы, недостаточного анализа ее значимости и мифов, укорененных в сознании большинства представителей политического поля Армении, все сводится лишь к поверхностному представлению о вопросе, а политические решения по Джавахку принимаются Ереваном иногда не вникая в самую суть проблемы.

Для сравнения можно даже провести своеобразные аналогии с тем поверхностным пониманием проблемы, существующим у большинства представителей политической элиты Армении по проблемам и перспективам карабахского урегулирования. В частности, многие политики и эксперты в Армении утверждают о том, что возможно «урегулирование» карабахской проблемы путем сдачи, например, нескольких районов вокруг НКР Азербайджану в качестве пред условия «справедливого компромисса», что станет залогом достижения мира, разблокирования коммуникаций и т.д. Естественно, что все эти подходы имеют мало общего с политической реальностью, сложившейся вокруг карабахского урегулирования, но весьма распространены в армянской политической элите.

Практически аналогичная ситуация складывается и вокруг проблемы Джавахка – исходя из стереотипов и отсутствия реальной информации по этому региону с его более чем стотысячным армянским населением: многие представители армянской политической элиты начинают сразу же делать выводы и принимать решения исходя из «прагматизма», автоматически сводя всю проблему только к вопросам транспортных коммуникаций Армении через Грузию, наличия российской базы в Ахалкалаки (и соответственно, «руке Москвы» в нагнетании ситуации в этом регионе) и т.п. Весьма распространены аналогии со «вторым Карабахом»: считается, что любая активизация Еревана в этом вопросе сразу же приведет к открытому конфликту или даже чуть ли не к войне с Грузией.

За последние два-три года в вопросе Джавахка появились также новые стереотипы: по мере усиления и активизации процессов европейской и евро-атлантической интеграции Армении, налаживания серьезных контактов Еревана с США и европейскими странами, в армянской политической элите стали уже делать выводы о том, что если Грузия пользуется «благодарностью» Вашингтона и Брюсселя, то любая критика политики Грузии по проблемам Джавахка могут повлечь за собой проблемы для Армении во взаимоотношениях с США, ЕС или НАТО.

Однако естественно, что как и в любой политической проблеме (а проблема Джавахка в первую очередь является именно политической), ситуация намного сложнее, ее причины намного более глубоки и требуют более серьезных решений. Поэтому позиция и действия армянского руководства и политической элиты Армении в вопросе Джавахка должны быть намного более продуманными, а местами также и более принципиальными. Для адекватного восприятия проблемы необходимо по иному взглянуть на проблему, исходя не из поверхностного взгляда, а из глубокого анализа ситуации и долговременных перспектив развития армянской государственности.

Распространенный и очевидный тезис о важности для Армении коммуникаций через Грузию нуждается в существенных уточнениях. Во-первых, хотя Армения действительно в очень значительной степени зависит от пролегающих через Грузию коммуникаций, однако

надо учитывать, что Тбилиси также во многом нуждается в стабильном их функционировании, исходя как из своих экономических, так и из политических соображений. Транзитные сборы составляют значительную часть дохода Грузии, а политические угрозы для Грузии в случае угроз функционирования коммуникаций Армении должны четко осознаваться грузинским руководством: в условиях нынешней полублокады Армении такие действия Грузии могут вынудить армянскую сторону уже к тотальным контрдействиям по их разблокированию, вне зависимости от их последствий для всего региона Южного Кавказа. Этот пример, впрочем, приводится нами лишь в качестве теоретического контрдовода: однозначно ясно, что Армения не собирается выдвигать территориальных претензий к Грузии в вопросе Джавахка, а любые действия по защите прав армянского национального меньшинства в Грузии не могут являться для этой страны легитимным поводом для какого-либо блокирования коммуникаций Армении. И, наконец, не надо забывать, что как и в случаях со странами, по территории которых проходят значимые трубопроводы или коммуникации, Грузия сама становится заложником безопасности коммуникаций, проходящих через ее границы. В случае же трубопроводов можно даже утверждать, что Грузия и многие ее национальные интересы давно уже превратились в заложников потоков нефти и газа, проходящих через ее территорию.

Кроме этого, как и любая страна, Грузия имеет важнейшие стратегические приоритеты своего долгосрочного политического развития и для нее это вступление в НАТО, а в перспективе - в ЕС. В условиях продолжающегося конфликта со своими двумя бывшими автономиями (Абхазией и Южной Осетией), серьезной религиозной и этнической ксенофобией внутри страны, неблагоприятной ситуацией в сфере экономики любой новый конфликт, инициируемый Грузией и угрожающий коммуникациям не только Армении, но и всего региона Южного Кавказа, поставит крест на этих приоритетах грузинской государственности. Поэтому у грузинского руководства существуют очень серьезные объективные и субъективные ограничители для создания любого рода угроз коммуникациям Армении, проходящим через ее территорию. Тем более что все инициативы Армении по проблемам Джавахка полностью укладываются в разумные и с политической и правовой точки зрения весьма корректные стандарты защиты прав человека и этнических меньшинств в этом регионе Грузии.

Несмотря на то, что Грузия во многом пользуется поддержкой западных стран и организаций, это в основном результат ее острого противостояния с Россией. Антироссийские риторика и политика являются существенными ресурсами, относительно умелое использование которых дает определенные преференции Тбилиси. До последнего времени дистанцирование Армении от проблем Джавахка позволяло Грузии представлять ситуацию в Джавахке как результат провокаций России. Грузинская сторона с середины 1990-х гг. и по настоящее время смогла максимально использовать тот политический ресурс, который им давало в глазах европейцев и американцев наличие российской военной базы в Ахалкалаки, «спекулируя» фактом ее экономической и политической значимости в решении насущных проблем местного населения, вынужденной экономической миграцией многих жителей региона на сезонные заработки в Россию и, вследствие этого, связями армян Джавахка с Россией. Можно даже сказать, что еще с конца 1990-х гг. грузинские власти и эксперты попросту в некоторой степени «шантажировали» США и Европу «российским фактором» в Джавахке, что объясняет тот факт, почему за все это время официальный Тбилиси не сделал никаких шагов по реальному улучшению социально-экономической и политической ситуации в этом регионе.

Однако в настоящее время российский фактор фактически потерял свое значение в Джавахке (а после завершения вывода 62-й российской базы оттуда может практически не приниматься во внимание) и политическая проблема в этом регионе уже переводится только в армяно-грузинский формат. Поэтому действия Армении по защите прав армянского населения Джавахка, будучи представлены в компетентном виде, не будут вызывать противодействие европейских стран, при соответствии имеющимся международным политико-правовым стан-

дартам и обязательствам Грузии по защите этнических меньшинств. Грамотно представленные инициативы Еревана в вопросе Джавахка абсолютно не вызовут противодействия Вашингтона и Брюсселя и по той простой причине, что многие западные исследовательские центры в последние годы в своих анализах и рекомендациях по ситуации с защитой этнических меньшинств в Грузии сами весьма критичны. Нельзя также забывать, что за последние месяцы, после чрезвычайно острого обострения российско-грузинских отношений вследствие во многом неадекватного (как считают многие на Западе) поведения нынешнего грузинского руководства, в целом значительно увеличилось критическое отношение к Грузии со стороны европейских структур и даже США. В таких благоприятных условиях, когда есть все объективные предпосылки для использования не только потенциала армянских лоббистских организаций в США и Европе в вопросе Джавахка, но и рекомендаций и докладов авторитетных западных центров и организаций, Армения своим бездействием в данном вопросе лишь дает возможность Грузии самой пользоваться стереотипами внутри армянской политической элиты и угрожать использованием западного ресурса в случае активизации действий Еревана в вопросе Джавахка.

Более того, некоторые ведущие западные аналитические центры, занимающиеся региональными политическими проблемами и конфликтами на Южном Кавказе, в своих рекомендациях по улучшению ситуации в Джавахке и снижению конфликтного потенциала предлагают решения, о которых два года тому назад некоторые руководители Армении даже и думать боялись. К примеру, в самое ближайшее время (возможно, уже во второй половине ноября 2006г.) Международной Кризисной Группой (*ICG*), известной своими прошлогодними рекомендациями относительно карабахского урегулирования, будет опубликован доклад с предложениями для Грузии и международного сообщества по введению армянского языка в качестве языка местного судопроизводства и делопроизводства в регионе Самцхе-Джавахетия, расширения местного самоуправления и т.д. Тем самым, международные эксперты уже дают конкретные рекомендации по Джавахку, которые в некоторых сферах даже превосходят те предложения, которые выдвигались ранее отдельными армянскими экспертами, но в силу стереотипных страхов и необоснованных фобий весьма негативно воспринимались многими представителями политической элиты и государственных структур Армении.

Однако, даже с учетом уже упущенного потенциала в вопросе Джавахка, у армянской стороны по прежнему сохраняются некоторые серьезные ресурсы по реализации выгодных для Армении и армянского населения Джавахка политических инициатив. В частности, для этого необходимо в краткосрочной перспективе стимулирование общественного интереса к объективному обсуждению проблемы Джавахка во внутривнутриполитическом поле Армении, привлечение ресурсов соответствующих государственных структур (в первую очередь МИДа), а также лоббистских организаций в США и в Европе для доведения позиции Армении и армянского населения Джавахка международному сообществу и ведущим западным государствам. При этом фактологической основой и базой для реформ в Джавахке могут стать именно вышеуказанные доклады некоторых международных организаций по проблемам защиты этнических меньшинств в Грузии. При этом если на европейском поле основной упор армянской стороной должен делаться на политико-правовых стандартах и механизмах по защите меньшинств (обязательства Грузии согласно Рамочной Конвенции Совета Европы по защите национальных меньшинств 1995г. и другим релевантным документам), то в диалоге с представителями государственных структур и исследовательских организаций США необходимо указывать на факторы безопасности и политические приоритеты (политическая стабильность и судьба правящего режима в Грузии, повышение уровня конфликтности, безопасность коммуникаций и трубопроводов, и т.д.), которые могут оказаться под угрозой в случае нарушения прав армянского этнического меньшинства в Джавахке.

Интересы Армении требуют, чтобы в Джавахке не ущемлялись права армянского населения этого региона и не изменялась демографическая ситуация вследствие значительной мигра-

ции оттуда армян, местное население было в состоянии сохранять свою культуру, язык, образование и обладать определенными политическими правами и адекватным уровнем самоуправления. В противном случае в самое ближайшее время могут появиться серьезные проблемы для безопасности и развития армянской государственности, создадутся опасные предпосылки, объективно способствующие распространению азербайджано-турецкого влияния в Грузии, а также географической и на этот раз действительно коммуникационной изоляции Армении в случае реализации проекта железнодорожной дороги Карс-Ахалкалаки и распространения азербайджанского этнического элемента вдоль северных границ Армении. Исходя из этого, жизненно важно, чтобы стереотипное восприятие проблемы Джавахка политической элитой Армении обязательно изменилось, для чего нужно стимулирование объективного и принципиального обсуждения и изучения данного вопроса в стране и активизации государственной политики Армении в европейских структурах и в ведущих западных странах относительно решений, касающихся судьбы этого армянонаселенного региона.

Сергей Минасян

ԹԻՖԼԻՍԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՎԱԽՔԻ ՄԱՍԻՆ

Հայտնի է այն տեսակետը, որ թիֆլիսահայերը բավական պասիվ, թույլ կազմակերպված և անտարբեր են ջավախահայերի ճակատագրի նկատմամբ: Դա բացատրվում է նրանով, որ թիֆլիսահայերը, ապրելով բուն մայրաքաղաքում, առավել ինտեգրված են վրացական հասարակության մեջ և հետևողական չեն հայապահպանության խնդիրներում: Ըստ մեր հետազոտությունների, առկա է շեշտադրված տարբերակում թիֆլիսահայերի և ջավախահայերի միջև՝ հոգեկերտվածքի, մտածելակերպի և վարքագծի առումներով: Հասարակական ընկալումներում արմատացած են երկու տարբեր կարծրատիպեր. լեռնցու խիզախությամբ օժտված, անզիջում, առավել քաղաքականացված ջավախահայի և գուսպ, հարմարվողական, փոքր-ինչ անտարբեր, ոչ այնքան քաղաքականացված թիֆլիսահայի կերպարները: Այս տարբերությունները բացատրվում են թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ գործոններով՝ սկսած Ջավախքի լեռնային կլիմայով, Հայաստանին մոտ լինելու պարագայով (ինչով թիֆլիսահայերի կողմից հիմնավորվում է ջավախահայերի խիզախությունը), Ջավախքում առկա խոր սոցիալ-տնտեսական խնդիրներով և այլն: Համարյա թե չի հնչում այն միտքը, որ **ջավախահայերը, վերջին հաշվով, բնակվում են իրենց պատմական Հայրենիքում:** Կարելի է ասել, որ այս գաղափարը չկա թիֆլիսահայերի գիտակցության մեջ:

Ուրվագծենք թիֆլիսահայության կողմից Ջավախքի խնդրի ընկալման մի քանի ընդհանուր և տարածված պատկերացումներ.

1. Հաճախ, երբ հարց էր հնչեցվում Ջավախքի մասին, թիֆլիսահայերի պատասխանը հետևյալն էր. «Չէ, ես ապաքաղաքական մարդ եմ, չեմ ուզում խոսել Ջավախքի մասին»: Այսինքն՝ Ջավախքի հիմնախնդիրն ընկալվում է որպես առավելապես քաղաքական (կամ անհարկի քաղաքականացված) խնդիր, ինչի մասին խոսելը, հատկապես ձայնագրելու պարագայում, ցանկալի չէ, նույնիսկ վտանգավոր է:
2. Շատերը ջավախահայերի կողմից խնդիրների բարձրացումը օբյեկտիվ են համարում, այն դիտում են որպես Վրաստանի պետական անհեռատես քաղաքականության արդյունք.
 - «Ես կոնֆերենցիային ասացի, «դուք արհեստականորեն կտրեցիք Ջավախեթին ձեզանից, հիմա էլ ասում եք՝ «Ջավախեթին մերը չի»: Մեր ալիքը ամբողջ Վրաստանով անցնում էր հասնում մինչև Կալչատկա, 1992թ. փոխեցին ալիքը՝ դարձանք Թբիլիսի և 60 կմ շառավիղ: Դա էլ Ախալքալաք չի հասնում: Ախալքալաքի բնակիչը ի՞նչ պիտի աներ՝ անտենաններ դներ ու միացներ ՀՀ հեռուստատեսությունն, ռադիո՞ և Ռուսաստան: Այնտեղի բնակիչը ոչինչ չգիտի Վրաստանի մասին, միայն գիտի, որ Վրաստանի նախագահը Սահակաշվիլին է, իրենք արհեստականորեն կտրեցին իրենցից Ջավախքը, ասացին՝ Հայաստան, Ռուսաստան, վերցրու»:
 - «Երբ որ Ջավախքում ցույցեր էին, մենք գնացինք: Այստեղ ՋԼՄ-ն ասում էին, որ Ջավախքում մարդիկ ավտոմատներով են: Բայց մենք գնացինք և տեսանք, որ այդպես չի. նրանք ուղղակի չեն ուզում կորցնել իրենց ինքնությունը: Պետք է նրանց հետ նորմալ խոսել, ասել, որ ձեր հողերն են և դուք այստեղ ապրում եք պատմականորեն: Այլ ոչ թե այստեղից ապատեղեկատվություն տարածողներ ուղարկել, որպեսզի նրանք էլ մշտապես տարածեն, թե շուտով կգան ՆԱՏՕ-ական և թուրքական զորքեր: Ով էլ լսի նման արտահայտություններ, միտինգ կանի»:
 - «Վրացերենի չիմացությունը ոչ թե հայ ժողովրդի հանցանքն է, այլ պետական քաղաքականության մեղքը»:

3. Թիֆլիսահայ միջավայրում ակտիվ շրջանառվում է պատանդի գաղափարը. թիֆլիսահայ իրականության մեջ տարածված է մի տեսակետ, ըստ որի՝ թիֆլիսահայերը ջավախահայերի պատանդն են: Մեջբերումներ հարցազրույցներից.

➤ *«Ջավախահայերի համար տարբերություն չկա, թե մեզ հետ այստեղ ինչ կկատարվի: Իրենց ինչ կա, եթե իրենց վրա հարձակվեն՝ նկուղից ավտոմատը կհանեն, իսկ մենք ինչ հանենք՝ շէնք: Ամեն ինչ Ղարաբաղից սկսվեց: Ես չեմ ասում, որ Ղարաբաղում չպետք է սկսեին, ես ասում եմ, որ ոչ թե քառասյին ձևով էր պետք սկսել, այլ մեթոդական, գեղեցիկ՝ պետք էր սկզբից հայերին հանել Բաքվից, հետո... Ղարաբաղցիները սկսեցին, իսկ ադրբեջանցիները գազան են, 1905 թիվը հիշեցին: Իսկ մեզ ոչ միայն 1905թ. կհիշեցնեն, այլև Աբխազիան, Օսիան, Ջավախքը, «Ծովից ծով Հայաստանի» քարտեզները: Մենք այստեղից չենք հասցնի փախչել: Այստեղի փախստականները ազահույթամբ են նայում Հավլաբարում ու Մետրոստրոյում մեր կառուցած տներին: Մենք պետք է հասկանանք, որ բոլորս էլ այստեղ հյուր ենք»:*

➤ *Շենք Ջավախքում խառնվում են, ասում ենք՝ «դե թողեք հանգիստ նստենք, էլի»:*

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ «Թիֆլիսահայությունը՝ որպես ջավախահայության պատանդ» ընկալումը հիմնականում շրջանառվում է առավել կենցաղային մակարդակում: Այս շրջանակներում նաև անընդունելի են համարում Ջավախքում հայերենը որպես պետական լեզու հռչակելու մասին հնչած կոչերը (այս հարցի շուրջ Վրաստանում ՀՀ դեսպանի հնչեցրած տեսակետը տե՛ս ստորև¹): Բացի այդ, խիստ քննադատության է ենթարկվում ջավախահայերի շրջանում վրացերենի՝ որպես պետական լեզվի չիմացությունը:

Փոխարենը՝ մի շարք մտավորականներ, քաղաքական գործընթացներին առավել ակտիվ հետևող անհատներ այլ կերպ են ընկալում ստեղծված իրավիճակը. նրանք ջավախահայությունը դիտում են որպես թիֆլիսահայության անվտանգության երաշխիք, որը, որպես այդպիսին, ցավոք, թիֆլիսահայերի կողմից գնահատված ու գիտակցված չէ: Այսպես.

➤ *«Մենք Վրաստանի համար վտանգավոր ենք, որտեղ մենք հողի խնդիր ունենք: Մեկ-մեկ ասում են՝ ջավախահայերը որ ակտիվանում են, մեզ կարող է ճնշեն: Բայց պարզ չի՝ ո՞վ է զալոժնիկ՝ թիֆլիսահայե՞րը, թե՞ ջավախահայերը: Հարց է՝ ո՞վ ո՞ւմ է խանգարում կամ օգնում: Կարող է՞ իրենք են մեր զալոժնիկը, քանի որ մենք այստեղ կանք, մեր անվտանգության մասին մտածելով իրենք շատ չեն ակտիվանում: Եթե մեզ այստեղ մի քիչ ճնշեն, շատ հնարավոր է, որ Ջավախքը կորցնեն ավտոմատ կերպով» (նշենք, որ մեր գրուցակիցն այն քչերից է, որ հետևում է հայկական մամուլին):*

➤ *«Փառք աստծո, որ Ջավախքի հայերն այդքան տոկուն են: Քանի կա Ջավախք, մենք էլ այստեղ կանք»:*

Այս մոտեցման կողմնակիցները գիտակցում են, որ շնորհիվ ջավախահայության պաշտոնական Թբիլիսին զգուշավոր մոտեցում ունի նաև թիֆլիսահայության նկատմամբ:

Այս մոտեցմանը մենք կարող ենք ավելացնել այն, որ ջավախահայության գործոնը կարևոր դեր է խաղում ոչ միայն Վրաստանի ներքին, այլև արտաքին քաղաքականության մեջ: Ինչպես նշում է Ա.Այվազյանը, «Ջավախքի հայաբնակության գործոնը, Հայաստանի շահերին նրա բնական հավատարմությունն ու ազգային արմատները Թիֆլիսին զգալի չափով հետ է պահում Թուրքիայի և Ադրբեջանի հետ արդեն ձևավորված ռազմավարական գործընկերու-

¹ «Ինչ վերաբերում է Ջավախքում հայերենին պետական լեզվի կարգավիճակ շնորհելուն, կցանկանայի նշել, որ տվյալ հարցի լուծումը իր ամբողջ հրատապությամբ հանդերձ, մոտակա հեռանկարում նվազ հավանական է: Ներկայումս թերևս կարելի է, օրինակ, բարձրացնել Ջավախքում հայոց լեզվին աշխատանքային կամ գործավարության լեզվի կարգավիճակ տալու հարցը՝ վրացերենի հետ: Նման դեպքում Վրաստանի ղեկավարության համար էլ անհամեմատ ավելի դյուրին կլինի գտնել հայոց լեզվի կարգավիճակի լավագույն տարբերակ», տե՛ս Վրաստանում ՀՀ դեսպան Հ.Սիլվանյան, «Վրաստանում դիվանագիտության ավելանում է բարիդրացիության և հարազատության գործոնը», <http://www.azg.am/?lang=AM&num=2006060707>:

թյունը խորացնելուց: Այդ գործոնի բացակայության պարագայում վրացական քաղաքականությունը տարածաշրջանում կընդունի արդեն բացահայտ հակահայկական ուղղվածություն»¹:

Այսպիսով, ինչպես երևում է նյութերից, թիֆլիսահայ միջավայրում Ջավախքի հիմնախնդրի ընկալումը բավական աղճատված է, իջեցված կենցաղային մակարդակի, այն շրջանավում է առանց խնդրի խորքային ըմբռնման և քննարկման: Դա զարմանալի չէ, քանի որ, ինչպես նշել էինք մեր նախորդ հրապարակման մեջ², Ջավախքի խնդրի մասին թիֆլիսահայությունը տեղեկանում է բացառապես վրացական լրատվամիջոցներից: Այնուամենայնիվ, կարելի է լսել մի քանի սթափ և իրատեսական կարծիքներ նշված խնդրի շուրջ, բայց առավելապես այն անհատների կողմից, որոնք սերտ կապեր ունեն Հայաստանում կամ նրանց համար հասանելի է հայաստանյան մամուլը:

*Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ*

¹ Այվազյան Ա., Ռազմավարական խոռոչները հայոց քաղաքական գիտակցության մեջ կամ Հայաստանի աշխարհաքաղաքական գոյության արսիմները, Գլենդել, 2006, էջ 17:

² Տե՛ս «Գլոբուս - 4»:

ԼԻԲԱՆԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2006թ. հոկտեմբերի 27-ին «Նորավանք» ԳԿՀ-ում տեղի ունեցավ սեմինար «Լիբանանի վերջին պատերազմը և լիբանանահայության արդի հիմնախնդիրները» թեմայով:

Որպես հիմնական բանախոս հանդես եկավ լիբանանահայ մտավորական **Գևորգ Յազրճյանը**: Նա նշեց, որ պատերազմից լիբանանահայերից ոչ մեկը չի տուժել, չի վնասվել նրանցից որևէ մեկի բնակարանը կամ ավտոմեքենան, սակայն հայերը տուժել են տնտեսապես, այնքան, որքան մնացած լիբանանցիները՝ այժմ էլ իրենց վրա զգալով Լիբանանի տնտեսական ծանր իրավիճակի հետևանքները¹:

Բանախոսն, ընդհանուր առմամբ, լիբանանահայության խնդիրները ներկայացրեց լիբանանյան էթնոդավանական խճանկարի ֆոնին՝ շեշտելով, որ Լիբանանը գտնվում է տարբեր պետությունների շահերի և հետաքրքրությունների բախման կիզակետում: Ըստ այդմ, լիբանանյան համայնքներից յուրաքանչյուրն ավանդականորեն գտնվում է որևէ ուժային կենտրոնի հետաքրքրության տեսադաշտում: Այս առումով, հայերը չունեն ավանդական դաշնակիցներ, ուստի՝ անվտանգության կայուն երաշխիքներ: Քրիստոնյա մարոնիներն ավանդականորեն գտնվում են Ֆրանսիայի, շիաները՝ Իրանի, սուննիները՝ Սաուդյան Արաբիայի և Ծոցի երկրների, դրուզները՝ Մեծ Բրիտանիայի հետաքրքրությունների տեսադաշտում:

Մնացյալ բոլոր համայնքներից լիբանանահայերն են հայտնվել բարոյահոգեբանական առավել ծանր իրավիճակում, քանի որ Լիբանանը նրանց համար հուսալի վայր չի թվում կենսագործունեության և ազգապահպանության տեսանկյունից:

Հայ համայնքը, որը կազմված է սոցիալական տարբեր շերտերից, երկփեղկված է. ռավակավարներն ու հնչակյանները կողմնորոշված են դեպի Արևմուտք, իսկ դաշնակցականներն՝ ավելի դեպի *Հիզրալլահ* և գեներալ Միշել Աունի՝ «Ազատ հայրենասերների միություն» դաշինք, որը ձգտում է ավելի չեզոք լինել քաղաքական կողմնորոշումների հարցում, ի տարբերություն մարոնիական մյուս՝ «Լիբանանյան ուժեր» բավական արևմտամետ դաշինքի, որը դեկավարում է Սամիր Շաժան:

Հայ հասարակական-քաղաքական միտքը Լիբանանում քառսի և ճգնաժամի մեջ է: Հայերի շրջանում մեծ է արտագաղթի տրամադրությունը: Երբեմնի հզոր հայ համայնքն այսօր ունի ոչ ավելի, քան 50-60 հազար մարդ: (Կաթոլիկ և ավետարանական հայերի մեջ, որոնց ստույգ թիվը հայտնի չէ, հայկական ինքնությունը շատ թույլ է արտահայտված: Նրանք հիմնական մասով արաբախոս են): Լիբանանահայության 70%-ն այժմ ճամպրուկային տրամադրության մեջ է, մեծ թիվ են կազմում հատկապես Ամերիկա մեկնողները: Կարելի է ասել, որ արտագաղթող քրիստոնյաների համար բաց են Կանադայի և Հունաստանի դռները²:

Պատերազմի ժամանակ հայերի չեզոքությունը լիբանանյան արևմտամետ առանձին շրջանակների կողմից բացասաբար ընկալվեց: Մասնավորապես մարոնիները հույս ունեին, որ պատերազմը կթուլացնի Լիբանանում շիաների դիրքերը: Դաշնակցական շրջանակներն իրենց բարեգործական կառույցների միջոցով զգալի օգնություն ցույց տվեցին շիա գաղթականներին՝ նրանց ապաստան ու ծածկ տրամադրելով:

Ընդհանուր առմամբ, *Հիզրալլահի* պայքարը համախմբեց լիբանանցիներին: *Հիզրալլահի* «Ալ-մանար» հեռուստաընկերության տվյալներով՝ լիբանանցիների 63%-ը պատերազմի շրջանում աջակցել է շարժմանը: Չնայած այդ փաստին, թե՛ հայերին և թե՛ լիբանանյան մյուս համայնքներին անհանգստացնում է երկրում շիական գործոնի ակտիվացումը, թեև շիական

¹ Ներկայումս Լիբանանի արտաքին պարտքը \$45 միլիարդ է, որը բացառիկ մեծ թիվ է Լիբանանի պես փոքր պետության համար:

² Լիբանանահայերի արտագաղթը սկիզբ էր առել դեռևս 1975-1989թթ. քաղաքացիական պատերազմի շրջանում, որոնց մի զգալի մասը հաստատվեց Կանադայում (խմբ.):

քաղաքական վերնախավը հավաստիացրել է, որ Լիբանանում իսլամական պետություն ստեղծելու ոչ մոտալուտ, ոչ հեռավոր ծրագրեր չունի: Ժողովրդագրական մեծ ցուցանիշներ ունեցող շիաները (որ կազմում են լիբանանյան բնակչության 40%-ը և իսլամական համայնքի 60%-ը) աչքի են ընկնում կուռ համախմբվածությամբ, հայրենասիրության բարձր գիտակցությամբ և վաղվա օրվա նկատմամբ ունեցած լավատեսությամբ: Նրանք իրենց համարում են պատերազմի հաղթող կողմ, որոնց *Հիզբալլահ* շարժումը խոստացել է նոր շենքեր կառուցել՝ պատերազմից տուժածներին տրամադրելով \$10 հազ.: Պատերազմի շրջանում միավորված են հանդես եկել շիական երկու գլխավոր քաղաքական ուժերը՝ *Հիզբալլահ* և *Ամալ* շարժումները:

Գ.Յազըճյանը խոսեց լիբանանահայության կրած պարտությունների մասին: Դրանցից մեկը կապված է 2006-ի ապրիլին Սուլթան Աբդուլ Համիդի անունով Տրիպոլիի հրապարակներից մեկի անվանակոչության հետ, իսկ մյուսը՝ խաղաղապահ ուժերի մեջ Թուրքիայի մասնակցության հարցին: Նա անխոհեմ համարեց դրա դեմ պայքարող դաշնակցականների գործողությունները, ինչն արդեն քննադատության է արժանացել լիբանանյան որոշ շրջանակների կողմից: Այս կապակցությամբ բանախոսը վկայակոչեց լիբանանյան մամուլի առանձին հոդվածներ:

Բանախոսը հատուկ ուշադրություն դարձրեց նաև հայրենադարձության խնդրին: Ի տարբերություն 1946-ի հայրենադարձության, որը կազմակերպված բնույթ էր կրում, ներկայումս լիբանանահայերի պատկան որևէ մարմին ոչ միայն չի քաջալերում լիբանանահայերի Հայաստան ներգաղթը, այլև անընդունելի է համարում այն: Բանախոսը վկայակոչեց այս կապակցությամբ Կիլիկիո Արամ կաթողիկոսի տեսակետը, որը խիստ բացասական վերաբերմունք ունի լիբանանահայության արտագաղթի կամ Հայաստանում նրանց հաստատվելու վերաբերյալ: Այն հարցին, թե, ի վերջո, եթե մի օր լիբանանահայ համայնքն այլևս գոյություն չունենա, ինչ պետք է լինի Անթիլիասի ճակատագիրը, Գ.Յազըճյանն ասաց. «Կան խոսակցություններ այն մասին, որ Կիլիկիո կաթողիկոսությունը կարող է տեղափոխվել Կանադա, որտեղ մեծ թվով լիբանանահայեր են բնակվում»:

Ըստ բանախոսի՝ հայրենադարձության համակարգված ծրագրի կիրառման դեպքում լիբանանահայերի շուրջ 20%-ը, հնարավոր է, հաստատվի Հայաստանում, ինչը նա խիստ դրական համարեց Հայաստանում նախևառաջ ժողովրդագրական գործոնի ակտիվացման առումով:

Նյութը պատրաստեց **Արաքս Փաշայանը**
«Նորավանք» ԳԿՀ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԳՈՐԾՐՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Նախաբան

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Եվրոատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը եվրոպական կառույցներին ու հաստատություններին լիարժեք ինտեգրումն է: Հայաստանը նաև մտադիր է աշխուժացնել գործնական և քաղաքական համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ՝ Դաշինքին ավելի մերձենալու նպատակով: Այս առնչությամբ կարևոր գործիքներ կհանդիսանան Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ), Պլանավորման և վերանայման գործընթացը, ինչպես նաև Դաշնակիցների հետ խորհրդակցությունները:

1.2. Հարաբերություններ հարևանների հետ

Հայաստանը ցանկանում է նպաստել Կովկասում տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը և հաստատակամ է բոլոր հարևանների հետ հարաբերությունների կառուցողական զարգացման և բարելավման գործում: Հայաստանը կաշխատի Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ և լիովին կաջակցի այդ խնդրում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին: Հայաստանը ձգտում է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը և հաստատակամ է հետամուտ լինել Թուրքիայի հետ կառուցողական երկխոսության, ներառյալ այդ նպատակով ուղղակի շփումները Թուրքիայի հետ:

1.3. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, օրենքի իշխանություն, պայքար կոռուպցիայի դեմ

Հայաստանը որդեգրել է ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության, թափանցիկության և կոռուպցիայի դեմ պայքարի գործում հետագա առաջընթաց ապահովելու ուղեգիծ: Հայաստանը նպատակ ունի մասնավորապես սահմանադրական, ընտրական և իրավական բարեփոխումների միջոցով ամրապնդել միջազգային չափանիշներին համապատասխան ժողովրդավարական հաստատություններն ու գործընթացները՝ հետամուտ լինելով լիովին համապատասխանել միջազգայնորեն ճանաչված չափանիշներին: Հայաստանը հաստատակամ է կոռուպցիայի դեմ պայքարում և նպատակ ունի իրականացնել գործնական քաղաքականություն՝ թափանցիկ ու լայնորեն հիմնավորված պատասխանատվության մեխանիզմներ մշակելու համար, ինչպես նաև կատարելագործել հասարակական պաշտոնյաների ուսուցումն ու իրազեկումը:

1.4. Ճգնաժամերի կառավարում, պայքար ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ

Հայաստանը ցանկություն ունի վերանայել ճգնաժամերի կառավարման իր մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ դրանք կատարելագործելու նպատակով:

1.5. Պայքար ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ

Հայաստանը մտադիր է ընդլայնել իր կարողություններն ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, ինչպես նաև ահաբեկչության և կազմակերպված հանցավորության գործողությունների հետևանքների կառավարման ոլորտներում: Հիմնվելով այս բնագավառում ՆԱՏՕ-ի հետ առկա համագործակցության վրա՝ Հայաստանը պատրաստ է ավելի ակտիվորեն ընդգրկվել համապատասխան ծրագրերում և միջոցառումներում, ինչպիսին է «Ահաբեկչության դեմ գործընկերության գործողություն» ծրագիրը, ներառյալ համապատասխան հետախուզական տեղեկատվության փոխանակումը: Հայաստանը նպատակ ունի նաև շարունակել օրենսդրական բարեփոխումներն ու գործնական միջոցներ ձեռնարկել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար:

1.6. Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողություն

Հայաստանը ձգտում է զարգացնել ու ամրապնդել Զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները, նպաստել պաշտպանական և անվտանգության քաղաքականության մշակման գործում քաղաքացիական մասնագետների և հասարակական շրջանակների

ներգրավմանը: Այդ նպատակով Հայաստանը հատուկ կարևորում է պաշտպանության և անվտանգության հարցերում քաղաքացիական հասարակության ընդգրկումը և խորհրդարանականների ու նրանց աշխատակազմերի ուսուցումն ու կատարելագործումը:

1.7. Տնտեսական զարգացում

Հայաստանը ձգտում է առողջ, կայուն և մրցունակ տնտեսական զարգացման: Այս առումով առաջնահերթություններ են դիտվում եվրոպական չափանիշների համաձայն թափանցիկ շուկայական տնտեսվարումը, ներքին և արտաքին տրանսպորտային ենթակառուցյունների զարգացումը, հնարավորինս անկախ էներգետիկ համակարգի կառուցումը, արտաքին ներդրումների խթանումը և նրանց համար հավասար իրավունքների ապահովումը, պետական ֆինանսական ռեսուրսների և (կամ) օտարերկրյա վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործման կանխումը:

1.8. Միջազգային կազմակերպություններ

Հետաժողով լինելով Եվրոպական կառույցներին ու հաստատություններին ինտեգրմանը՝ Հայաստանը նպատակ ունի ընդլայնել համագործակցությունը Եվրոպական միության հետ և ձգտում է ավելի սերտ ինտիմացիոնալ համատեղելիության՝ լիարժեք անդամակցումն այդ կառույցին համարելով հեռահար նպատակ: Հայաստանը կշարունակի համագործակցել նաև ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի հետ և հաստատակամ է այս կազմակերպությունների համապատասխան չափանիշները կիրառելու գործում: Հայաստանը գիտակցում է երկրում գործող տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների կրկնակումը նվազեցնելու անհրաժեշտությունը:

2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՆԻՐՆԵՐ

2.1. Պաշտպանական և անվտանգության համակարգի բարեփոխում

Հայաստանը նպատակ ունի մշակել Ազգային անվտանգության ռազմավարություն և Պաշտպանական հայեցակարգ, որոնք կսահմանեն Ձինված ուժերի և անվտանգության այլ կառույցների դերն ու առաքելությունը: Պաշտպանության և անվտանգության ոլորտների բարեփոխման նպատակների իրականացմանն օժանդակող լծակներ կհանդիսանան Պլանավորման և վերանայման գործընթացն ու Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ):

2.2. Պաշտպանական պլանավորում

Հայաստանի Հանրապետության նպատակը պաշտպանական և բյուջետային համակարգերի կատարելագործումն է, ինչպես նաև կայուն, թափանցիկ և ֆինանսական առումով իրատեսական պաշտպանական պլանների մշակումը: Այդ նպատակով Հայաստանը մտադիր է այս բնագավառներում հիմնել փորձագիտական համակարգ, ինչը կօգնի ապագա Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների մշակմանն ու իրագործմանը, ինչպես նաև Ձինված ուժերի բարելավմանը հրամանատարական-վերահսկողական, հանդերձավորման և թիկունքային ապահովման ոլորտներում: Հայաստանի Հանրապետությունը նպատակադրվել է նաև վերանայել իր ռազմարդյունաբերական համալիրը և մշակել դրա հետագա շահագործման վերաբերյալ առաջարկներ: Հայաստանը նախատեսում է վերանայել Պաշտպանության նախարարության անձնակազմի կառավարման համակարգը՝ զինվորական և քաղաքացիական անձնակազմի համար:

2.3. Ռազմական գործակցության և փոխգործունակության խնդիրներ

Հայաստանի Հանրապետությունը կշարունակի ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան մեկ խաղաղապահ գումարտակի կազմավորումը՝ այն հետագայում խաղաղապահ բրիգադի վերածելու նպատակով: Նախատեսվում է նաև ձևավորել Օպերատիվ կարողությունների հայեցակարգի շրջանակներում ինքնազնահատողների խումբ, որը կիրականացնի ՆԱՏՕ-ի ղեկավարած ԳհԽ գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումների ինքնազնահատում: Նպատակներից մեկն էլ ավագ սպաների պատրաստման դասընթացների մշակումն ու բոլոր զորատեսակների ամբողջ ուսումնական ծրագրի վերանայումն է:

2.4. Սահմանային անվտանգություն

Հայաստանի Հանրապետությունը մտադիր է վերանայել սահմանային անվտանգության ներկայիս պրակտիկական և ընթացակարգերը՝ սահմանային անվտանգության կատարելագործման նպատակով:

տակով: Այս վերանայման միջոցով կորոշվեն նաև կարիքները՝ առաջնային սարքավորումների տեսանկյունից:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Հասարակության իրազեկում

Հայաստանը նպատակ ունի ընդլայնել ՆԱՏՕ-ի, Գործընկերության և Դաշինքի հետ իր համագործակցության վերաբերյալ հասարակության իրազեկումը: Հայաստանը նաև նպատակադրել է ընդլայնել հասարակության իրազեկումը՝ պաշտպանական և անվտանգության համակարգերում իրականացվելիք բարեփոխումներին աջակցություն ստանալու նպատակով:

3.2. Գիտություն, Արդի հասարակության մարտահրավերների հանձնաժողով

Հայաստանը նպատակելու է Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության ու համագործակցության հաստատմանը՝ մասնակցելով «Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրին:

3.3. Պատրաստվածություն քաղաքացիական ճգնաժամերին

Հայաստանը հաստատակամ է կատարելագործել արտակարգ իրավիճակների ոլորտում իր ունեցած պատրաստվածությունը և արտակարգ իրավիճակներին արձագանքելու կարողությունները՝ աղետներին և ասիմետրիկ սպառնալիքներին դիմակայելու նպատակով: Հայաստանը նպատակադրել է մեծացնել սեփական կարողությունները և ընդլայնել կապերը ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համադրման Եվրաստլանտյան կենտրոնի հետ՝ աղետների հաղթահարման միջազգային գործողություններում իր ներդրումն ունենալու նպատակով:

4. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ «ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ» ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

4.1. Վարչական խնդիրներ

Հայաստանն անհրաժեշտ համադրում և փոխգործողության կարգավորումներ կիրականացնի այս Գործողությունների ծրագրի արդյունավետ իրագործման համար:

4.2. Պաշտպանողական անվտանգություն

Հայաստանը հաստատակամ է լիովին իրագործել ՆԱՏՕ-ի հետ առկա անվտանգության համաձայնագիրը:

4.3. Ռեսուրսներին առնչվող խնդիրներ

Հայաստանը մտադիր է անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ հատկացնել՝ այս Գործողությունների ծրագրով նախատեսված ծրագրերի ու գործողությունների իրականացմանը համապատասխան աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Գլուխ 1. Քաղաքական և անվտանգությանն առնչվող խնդիրներ

1.1 Եվրոպական և Եվրաստանյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.1.1.	Խորացնել համագործակցությունը Եվրոպական և Եվրաստանյան կառույցների ու հաստատությունների հետ
Գործող. 1.	Որպես ԱԳԳԾ գործընթացի մաս՝ դաշնակիցների հետ իրականացնել 26+1 ձևաչափով քաղաքական խորհրդակցություններ՝ անվտանգության և արտաքին քաղաքականության, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումներին առնչվող խնդիրների շուրջ:
1.1.2.	Անվտանգության սպառնալիքների և ազգային պաշտպանության պահանջների գնահատման նպատակով մշակել արդյունավետ ու թափանցիկ կարգավորման մեխանիզմներ և ընթացակարգեր
Գործող. 1.	Մշակել ազգային անվտանգության ռազմավարություն
Գործող. 2.	Զարգացնել «Դրաստամատ Կանայան» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հետազոտական և վերլուծական կարողությունները:

1.2 Հարաբերություններ հարևանների հետ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.2.1.	Նպաստել տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը Կովկասում
Գործող. 1.	Մեծացնել ԳԽԽ համապատասխան միջոցառումների տարածաշրջանային (Սևծովյան, Հարավկովկասյան) բաղկացուցիչը՝ միաժամանակ պահպանելով ներգրավվածության սկզբունքը:
Գործող. 2.	ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում աշխատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ և Դաշնակիցներին տեղեկացնել զարգացումների մասին:
Գործող. 3.	Հետամուտ լինել Թուրքիայի հետ կառուցողական երկխոսությանը:

1.3 Ժողովրդավարական բարեփոխումներ, օրենքի գերիշխանություն, պայքար կոռուպցիայի դեմ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.3.1.	ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի հետ շարունակել նախապատրաստել և իրականացնել ժողովրդավարական բարեփոխումներ
Գործող. 1.	Հիմնվելով 2005թ. տեղական ընտրությունների արդյունքների ու փորձի վրա՝ շարունակել ուսումնասիրել ընտրական օրենսդրությունը և վարչարարական կառույցները՝ պարզելու դրանց լիարժեք համապատասխանությունը ԵՄ չափանիշներին:
Գործող. 2.	Հաշվի առնելով քննության արդյունքները և ԵՄ ու ԵԱՀԿ խորհրդատվությունը՝ համապատասխանաբար փոփոխել օրենսդրությունը և վարչարարական կառույցները:
1.3.2.	Ընտրական բարեփոխումների իրականացում
Գործող. 1.	Լրամշակված Ընտրական օրենսգրքի համաձայն իրագործել ընտրական հանձնաժողովների կազմին առնչվող նոր սկզբունքներն ու կանոնները:
Գործող. 2.	ԵՄ և ԵԱՀԿ համապատասխան խորհրդատվության համաձայն շարունակել կատարելագործել ընտրական գործընթացը:
1.3.3.	2005թ. նոյեմբերին նախատեսված վերանայված Սահմանադրության ազգային հանրաքվեից հետո ակտիվորեն շարունակել պետական կառույցների, վարչարարական կառավարման և արդարադատության բարեփոխումները
Գործող. 1.	Ծարունակել իշխանության տարբեր ճյուղերի իրավասությունների սահմանումը և նրանց միջև փոխգործակցության կատարելագործումը:
Գործող. 2.	Երաշխավորել դատավորների իրական անկախությունը:
Գործող. 3.	Երևանի քաղաքապետի պաշտոնը դարձնել ընտրովի:
1.3.4.	Ավելի թափանցիկ և մատչելի իրավական գործընթացի ապահովման նպատակով իրականացնել օրենսդրական բարեփոխում
Գործող. 1.	Սահմանել իրավական համակարգի բարեփոխումների գործողության ծրագիր՝ այնտեղ ընդգրկելով աշխատավարձերի վերանայումը, ուսուցումը և մոնիտորինգը: - Գործընկերների (գործընկեր կազմակերպությունների) հետ համագործակցությամբ շարունակել վերանայել համապատասխան օրենսդրությունը (նախագծերը ներառյալ): - Նույնականացնել այն օրենքները, որոնք պետք է վերափոխվեն միջազգային չափանիշների համաձայն:

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
Գործող. 2.	Իրականացնել գործողության ծրագիրը, որը կներառի Դատավորների դպրոցի հիմնադրումը:
1.3.5.	Զարգացնել պաշտպանության ոլորտի արդյունավետ և թափանցիկ օրենսդրական և դատական վերահսկողություն՝ ներառյալ պահանջվող իրավական գործընթացների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան կարգավորումները:
Գործող. 1.	Օպտիմալացնել օրենսդրության դերը պաշտպանական գործունեության վերահսկման գործում՝ ընդլայնելով ԱԺ Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի, ինչպես նաև Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերով մշտական հանձնաժողովների մասնակցությունը:
Գործող. 2.	Քայլեր կատարել խորհրդարանականների և իրենց աշխատակազմերի կողմից պաշտպանական գործունեության վերահսկման հատուկ կրթական և ուսումնական ծրագրերի ընդլայնման ուղղությամբ:
Գործող. 3.	Հիմնել ներկայացուցչության և բողոքարկման իրավունքներ:
Գործող. 4.	Հիմնել զինվորական անձնակազմի բողոքներով զբաղվող օմբուդսմենի համակարգ:
Գործող.5.	Վերանայել գործող զինվորական կարգապահական կանոնադրությունը:
1.3.6.	Ապահովել մատույլի, խոսքի և հանրահավաքների ազատությունը:
Գործող.1.	Ապահովել վերջերս ընդունված «Հանրահավաքների ազատության մասին» օրենքի իրագործումը՝ հաշվի առնելով ԵՄ խորհրդատվությունը: Մեծացնել փոփոխված օրենքում ամրագրված կանոնների ու սկզբունքների իմացությունը քաղաքացիական հասարակության և պետական իշխանությունների կողմից (Օրենքը փոփոխվել է 2005թ. հոկտեմբերի 4-ին: Եվրոպայի խորհրդի որոշակի առաջարկներ հաշվի են առնվել):
1.3.7.	ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի և այլ համապատասխան միջազգային մարմինների հետ ապահովել մարդու իրավունքների մասին օրենսդրության ու պրակտիկայի համապատասխանությունը միջազգայնորեն ճանաչված չափանիշներին:
Գործող.1.	Հիմնել մարդու իրավունքների երաշխավորման պարզ և թափանցիկ մեխանիզմ: Մշակել օմբուդսմենի նշանակման թափանցիկ և վստահելի նախնական ընթացակարգ:
Գործող. 2.	Ապահովել մարդու իրավունքներին առնչվող միջազգային պարտավորությունների կատարումը:
Գործող.3.	Մարդու իրավունքների առնչությամբ միջազգային պարտավորություններին ու միջազգային չափանիշներին համապատասխանությունը որոշելու նպատակով՝ պատասխանատվությամբ վերանայել առկա օրենսդրությունը:
Գործող. 4.	Ընդունել անհրաժեշտ օրենքներ և պրակտիկա: - Գործընկերների (գործընկեր կազմակերպությունների) հետ համատեղ իրագործել այն առաջարկները, որոնք մշակվել են Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից իրականացված ՀՀ օրենսդրության համատեղելիության որոշման ուսումնասիրությունների ընթացքում:
Գործող.5.	Իրականացնել հասարակական պաշտոնյաների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված կրթական ծրագրեր:
1.3.8.	Պայքար կոռուպցիայի դեմ
Գործող.1.	Ակտիվորեն մասնակցել ԳԲԿԳՈ-ի միջոցառումներին և իրականացնել ԳԲԿԳՈ-ի հակակոռուպցիոն առաջարկները:
Գործող.2.	Իրականացնել Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությունը և գործողության ծրագիրը:
Գործող.3.	Հասարակական պաշտոնյաների համար հիմնել կոռուպցիայի վերաբերյալ պարզ և թափանցիկ հաշվետվության մեխանիզմ:
Գործող.4.	Հասարակական պաշտոնյաների ուսուցման և կրթության ընդլայնման միջոցով կատարելագործել կոռուպցիայի վերաբերյալ իրազեկությունը:

1.4 Ճգնաժամերի կառավարման կարգավորումներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.4.1.	Ընդլայնել ճգնաժամերի կառավարման հարցում Հայաստանի ընդհանուր կարողությունները և գերատեսչությունների համատեղ գործունեության համակարգում:
Գործող. 1.	Քննության առնել ճգնաժամերի կառավարման վերաբերյալ Հայաստանում գործող համակարգն ու ընթացակարգը:
Գործող.2.	Շարունակել կատարելագործել ճգնաժամերի կառավարման ազգային համակարգն ու գերատեսչությունների համատեղ գործունեության համակարգման ընթացակարգերը:
Գործող. 3.	Ստեղծել իրավիճակային կենտրոն:

1.5 Պայքար ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.5.1.	Ընդլայնել Հայաստանի կարողություններն ահաբեկչության դեմ պայքարում, այդ թվում նաև ահաբեկչության հետևանքով ստեղծված ճգնաժամերի կառավարման ուղղությամբ:
Գործող. 1.	Կատարելագործել ահաբեկչության դեմ պայքարում միջգերատեսչական համագործակցությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավիճակային կենտրոնին վերապահված իրավասությունների:
Գործող.2.	Ընդլայնել հակաահաբեկչական և ահաբեկչության հետևանքների վերացման գործընթացի կառավարման ազգային կարողությունները:
Գործող.3.	Կենսագործել միջազգային հակաահաբեկչական կոնվենցիաները և այլ միջազգային իրավական լծակները:
Գործող.4.	Բարելավել փոխգործակցությունը ռազմական և հատուկ հակաահաբեկչական ստորաբաժանումների միջև, նախապատրաստել դրանք՝ ՆԱՏՕ-ի ղեկավարած գործողություններին հնարավոր մասնակցության համար:
1.5.2.	Նպաստել «Ահաբեկչության դեմ Գործընկերության գործողության ծրագրի» շրջանակներում իրականացվող ԵԱԳՖ հակաահաբեկչական միջոցառումների իրականացմանը
Գործող.1.	Կապ հաստատել և տեղեկատվություն փոխանակել ՆԱՏՕ-ի հետ՝ Հետախուզական փոխգործողության ստորաբաժանման միջոցով: - Հետախուզության բնագավառում զարգացնել փոխվստահությունը ՆԱՏՕ-ի և Հայաստանի միջև՝ ստեղծելով ու պահպանելով մշտական հարաբերություններ և նշանակելով Հակահետախուզական փոխգործողության ստորաբաժանման հետ Հայաստանի շփման պատասխանատու, որը պատասխանատու կլինի ազգային տեսակետների համադրման համար: - Փոխանակման ծրագրի համար մշակել թեմաների ցուցակ՝ մասնավորեցնելով ահաբեկչության դեմ պայքարում ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության ցանկալի ոլորտները, որպեսզի հնարավոր լինի Դաշնակիցներից խնդրել Հայաստանի համար առանձնացնել ու բացել այդ թեմաների վերաբերյալ տեղեկատվությունը և հակառակը: - Բարձրացնել ՆԱՏՕ-ի և Հայաստանի պահանջների և հետաքրքրությունների վերաբերյալ իրազեկության մակարդակը:
Գործող.2.	- Գտնել գործնական տարբերակներ և տալ առաջարկներ տեղեկատվության փոխանակման արդյունավետ մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ: - Հետախուզական փոխգործողության ստորաբաժանման միջոցով ստեղծել տեղեկատվական հայցազրեի առաքման և ստացման ընթացակարգ:
Գործող.3.	«Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրի ներքո ընդլայնել Հայաստանի գիտական հասարակայնության և փորձագիտական ցանցերի ներդրումն ահաբեկչության դեմ պայքարում:
1.5.3.	Մշակել միջազգայնորեն ընդունված նորմերին ու պրակտիկային համապատասխանող պաշտպանական տեխնոլոգիաների և ռազմական տեխնիկայի արտահանման վերահսկման արդյունավետ ու թափանցիկ կարգավորումներ և գործելակերպ:
Գործող. 1.	Մշակել համապատասխան աջակցող մեխանիզմներ ու ընթացակարգեր:
Գործող. 2.	Ապահովել համապատասխան նորմերի ու պրակտիկայի իրագործմանն առնչվող գինվորական և քաղաքացիական անձնակազմի ուսուցումը:
Գործող. 3.	Կատարելագործել Հայաստանի կողմից միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ հասարակության իրազեկումը:
1.5.4.	Կատարելագործել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրավական դաշտը:
Գործող. 1.	Ձեռնարկել հետագա գործողություններ փողերի լվացման դեմ պայքարի միջոցները և մեթոդները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:
Գործող. 2.	ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1378 բանաձևի համաձայն ձեռնարկել գործնական քայլեր՝ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ուղղությամբ:
1.5.5.	Ընդլայնել Հայաստանի կարողությունները կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, այդ թվում դրա հետևանքով առաջացած ճգնաժամերի կառավարման ուղղությամբ:
Գործող. 1.	Կատարելագործել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իրավական դաշտը:
Գործող. 2.	Անդրազգային կազմակերպված հանցավորության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների համաձայն՝ ընդլայնել մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման գործողությունների պլանը:

1.6 Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.6.1.	Մշակել պաշտպանական գործունեության ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ ու թափանցիկ կարգավորումներ:
Գործող. 1.	Վերանայել ԶՈՒ վերահսկման ոլորտում Ազգային ժողովի, Պետության ղեկավարի, Կառավարության, Զինված ուժերի և այլ հնարավոր դերակատարների միջև ղեկավարման և աջակցության պարտականությունների բաժանման առկա կարգավորումները:
Գործող. 2.	Անհրաժեշտության դեպքում ընդունել նոր օրենքներ կամ փոփոխել օրենսդրությունը՝ առկա կարգավորումների կատարելագործման և պարտականությունների վերասահմանման նպատակով:
1.6.2.	Պաշտպանական և անվտանգության քաղաքականության մշակման գործում քաղաքացիականների մասնակցությանը, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը և պաշտպանությանն ու անվտանգությանը վերաբերող տեղեկատվության հասարակության հասանելիությանը նպաստելու համար ձեռնարկել արդյունավետ ու թափանցիկ միջոցներ:
Գործող. 1.	Քայլեր կատարել խորհրդարանականների և նրանց անձնակազմերի ուսուցման կատարելագործման ուղղությամբ:
Գործող. 2.	Քաջալերել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը պաշտպանության և անվտանգության խնդիրներում:

1.7 Տնտեսական զարգացում և քաղաքականության առաջնահերթություններ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.7.1.	Նպաստել ամուր, կայուն և կենսունակ տնտեսության զարգացմանը:
Գործող. 1.	Աշխատել Եվրոպական միության հետ հարաբերություններում «Շուկայական տնտեսության» կարգավիճակի ձեռքբերման ուղղությամբ:
Գործող. 2.	Կանխել ֆինանսական ռեսուրսների անհարկի օգտագործումը, ներառյալ պաշտոնական դիրքի չարաշահումը:
Գործող. 3.	Աշխատել տնտեսության բազմակողմանիության (դիվերսիֆիկացիայի) ապահովման ուղղությամբ:
Գործող. 4.	Հարկային և մաքսային վարչարարության արդյունավետ բարեփոխման միջոցով ստեղծել կենսունակ գործարար միջավայր՝ արտաքին ուղղակի ներդրումների համար գրավչություն ապահովելու նպատակով:
Գործող. 5.	Տարածաշրջանային էներգետիկ ծրագրերին մասնակցության միջոցով ձգտել էներգետիկ ռեսուրսների հասանելիությանը:
Գործող. 6.	Էներգիայի մատակարարումների այլընտրանքային աղբյուրների ապահովում և էներգիայի նորացված աղբյուրների շարունակական զարգացում:
Գործող. 7.	Հետամուտ լինել Հարավային Կովկասի տրանսպորտային ուղիների բացմանը և լիարժեք շահագործմանը:
Գործող. 8.	Ապահովել օտարերկրյա օժանդակության համապատասխան և ռացիոնալ օգտագործումը:

1.8 Համագործակցություն այլ միջազգային կազմակերպությունների հետ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.8.1.	Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում նախապատրաստվել և քայլեր ձեռնարկել Եվրոպական միության հետ ավելի սերտ ինտեգրացիոնալ համատեղելիության ուղղությամբ՝ հետագա անդամակցության հեռանկարով:
Գործող. 1.	Ավարտին հասցնել Եվրոպական միության հետ Գործողության ծրագիրը:
Գործող. 2.	Իրականացնել Գործողության ծրագիրը:
1.8.2.	Քաջալերել Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների գործողությունների փոխյրացումը, նվազեցնել և կանխել կրկնակումն ու համընկումը:

Գլուխ 2. Պաշտպանական անվտանգության և ռազմական հարցեր

2.1. ԶՈՒ ժողովրդավարական վերահսկողություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
2.1.1.	Հրամանատարական ուղղահայացի ուսումնասիրություն
Գործող. 1.	Որպես կառավարության ծրագրին աջակցություն, ըստ որի Զինված ուժերը պետք է վերափոխվեն այնպես, որ էլ ավելի համապատասխանեն ժողովրդավարական հասարակարգի արժեքներին, իրականացնել ՊՆ և ԶՈՒ ԳՇ ներկայիս հրամանատարական օղակի ու հրամանատարական-վերահսկողական ընթացակարգերի վերանայում՝ միջգերատեսչական հանձնաժողովի համար ապահովելով բարեփոխումների առաջարկներ:
Գործող. 2.	Որպես այս վերանայման մաս՝ սահմանել այն պաշտոնները, որոնք կարող են վերափոխվել անձնակազմի քաղաքացիական համայնամբ:
Գործող. 3.	Այս վերանայման արդյունքների և դրանցից բխող նպատակների իրականացման հիման վրա անհրաժեշտաբար փոփոխել և լրացնել օրենսդրությունը:

2.2 Համադրող հանձնաժողովը

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
2.2.1.	Կատեղծվի միջգերատեսչական հանձնաժողով, որը, համապատասխան փորձագիտական խմբերի աջակցությամբ, պատասխանատու կլինի Ազգային անվտանգության ռազմավարության և Պաշտպանական հայեցակարգի մշակման համար: Այնուհետև ռազմավարական փաստաթղթերը կներկայացվեն Անվտանգության խորհրդի հավանությանը և ՀՀ Ազգային ժողովի վերջնական հաստատմանը՝ համաձայն գործող ընթացակարգերի: Այս գործընթացի ընթացքում կիրականացվեն հասարակական քննարկումներ, որոնց կմասնակցեն նաև ոչ կառավարական հասարակական կազմակերպություններ:
2.2.2.	Ազգային անվտանգության քաղաքականության և դրան առնչվող փաստաթղթերի մշակումը
Գործող. 1.	Սպառնալիքների վերանայված գնահատմամբ մշակել Ազգային անվտանգության ռազմավարություն, որը նպատակաուղղված կլինի Հայաստանի Հանրապետության ամբողջ անվտանգության ոլորտին:
Գործող. 2.	Ազգային անվտանգության ռազմավարության հիման վրա Պաշտպանության նախարարությունը, այլ նախարարությունների համապատասխան փորձագետների և ներկայացուցիչների օժանդակությամբ, կմշակի Պաշտպանական հայեցակարգ, որը լայնորեն կսահմանի ԶՈՒ առաքելությունները և հաշվի կառնվի Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: Պաշտպանական հայեցակարգը կսահմանի նաև ԶՈՒ բարեփոխումների ուղղվածությունը:
2.2.3.	Ռազմավարական պաշտպանական վերանայման իրականացումը
Գործող. 1.	Պաշտպանության նախարարությունը կստեղծի նախագծային մարմին, որին կվստահվեն Ռազմավարական պաշտպանական վերանայման համադրումն ու ամենօրյա կառավարումը, ինչպես նաև հաստատված պլանների իրագործումը: Անհրաժեշտության դեպքում նախագծման խումբը կարող է օժանդակություն ստանալ փորձագիտական խմբերից, սակայն այն պետք է լինի պաշտպանության նախարարին առաջարկներ ներկայացնող կառույց: Նախագծային խմբում կընդգրկվեն նաև այլ, հատկապես Ռազմավարական պաշտպանական վերանայումից ազդեցություն կրող նախարարությունների ներկայացուցիչները:
Գործող. 2.	Նախագծային խումբն անհրաժեշտաբար պետք է ստեղծի նաև զեկուցման մեխանիզմ, ինչը կապահովի վերանայման առաջընթացին ու արդյունքներին պաշտպանության նախարարի և ԶՈՒ անձնակազմի իրազեկությունը: Այն պետք է ՊՆ-ում և ԳՇ-ում ծառայություն իրականացնելու համար նաև կրթի ու պատրաստի հասարակական կապերի մասնագետներ:
Գործող. 3.	Պաշտպանական հայեցակարգի հիման վրա իրականացնել Ռազմավարական պաշտպանական վերանայում, որով կսահմանվեն ԶՈՒ կառույցը, ենթակառուցվածքները (գործառնաբեր, օղանավակայաններ, շտաբներ) և առաջադրանքները՝ նպատակ ունենալով իրականացնել ռազմավարական միջավայրի, սպառնալիքների գնահատման ու հնարավոր ռեսուրսների հիման վրա կազմված Պաշտպանական հայեցակարգի առաքելությունները: Ազգային ժողովը և միջգերատեսչական հանձնաժողովը պետք է իրազեկ լինեն պաշտպանական վերանայման առաջընթացին:
Գործող. 4.	Պաշտպանության նախարարությունը նաև կմշակի հասարակական իրազեկման ռազմավարություն, որի նպատակը բարեփոխումային ծրագրերի համար քաղաքական և հասարակական աջակցության ձեռքբերումն է և Ազգային ժողովին ու հասարակությանը Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների և իրականացման ընթացքի մասին տեղեկացումը:

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
Գործող. 5.	Քանի որ Ռազմավարական պաշտպանական վերանայմամբ կարող է ընդունվել անձնակազմի և տեխնիկայի թվաքանակի կրճատման որոշում, ապա ստեղծել փորձագիտություն՝ կրճատված անձնակազմի վերապատրաստման և նրանց քաղաքացիական կյանք արձակելու, գործազուրկների և ենթակառուցվածքների փակման, զինամթերքի և զինտեխնիկայի ոչնչացման ծախսերի գնահատման համար:
2.2.4.	Պաշտպանական պլանավորում և բյուջետավորում
Գործող. 1.	Ուսումնասիրել պլանավորման և բյուջետավորման տարբեր համակարգեր՝ ազգային համակարգի մշակման և այս ոլորտում փորձագիտության ձեռքբերման համար: Այս գործընթացում կընդգրկվի նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը:
Գործող. 2.	Գնահատել պլանավորման և բյուջետավորման համակարգի առավելագույն համապատասխանությունը երկրի իրավիճակին և ապահովել պլանավորման գործընթացում ընդգրկված բոլոր նախարարությունների և համապատասխան այլ կառավարական մարմինների գործունեության ճիշտ համադրումը: Պլանավորման համակարգը պետք է նաև նպատակաուղղվի ավելի կայուն պլանավորման հիմունքների ստեղծմանը և պետք է հիմնվի հուսալի ֆինանսական պլանավորման վրա: Նոր համակարգը պետք է հաջող ֆինանսական տարվա համար ապահովի ժամանակին և կայուն բյուջետային կանխատեսում, ինչպես նաև վստահելի մոտավոր հաշվարկներ՝ հաջող տարիների համար:
Գործող. 3.	Ավարտել ավելի թափանցիկ, կատարյալ աուդիտային և հաշվապահական ընթացակարգերով ուղեկցվող պլանավորման և բյուջետավորման համակարգի ներդրումը, իրականացնել փորձաշրջան և ամբողջացնել նոր համակարգի իրականացումը:
Գործող. 4.	Ստեղծել պաշտպանական պլանավորման բաժանմունք՝ որպես երկարաժամկետ պլանավորման և տեխնիկայի (սարքավորումների) ձեռքբերման հիմնավորման համար անհրաժեշտ «Պահանջների հայտարարագրերի» մշակման պատասխանատու:
2.2.5.	Ջոռահավաքային համակարգ և պահեստագործի ուսուցում
Գործող. 1.	Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել և փոփոխել ներկայիս Ջոռահավաքային համակարգը՝ դրա արդյունավետության բարձրացման և ծախսերի նվազեցման նպատակով:
Գործող. 2.	Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել պահեստագործային ուժերի թվաչափը և դասակարգումը, սահմանել յուրաքանչյուր կարգի համար անհրաժեշտ սպառազինության և ուսուցման ծախսերն ու ծառայությունները:

2.3 Ռազմական փոխգործունակություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
2.3.1.	Մեկ խաղաղապահ գումարտակի կազմավորում
Գործող. 1.	Շարունակել խաղաղապահ գումարտակի կազմավորումը՝ օգտագործելով ՆԱՏՕ-ի չափանիշները:
Գործող. 2.	Ներդնել մեխանիզմներ, որոնք ապահովում են ՆԱՏՕ-ի չափանիշների կիրառումը ՆԱՏՕ-ի ղեկավարած ԳԽԽ գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումներում:
Գործող. 3.	Կատարելագործել գումարտակի մարտական ծառայությունների ապահովումը (թիկունքային՝ սնունդ, մատակարարումներ, պահպանում, վերանորոգում, ինչպես նաև բժշկական աջակցություն, ՌՔԿ պաշտպանություն և ռազմական ոստիկանություն), որպեսզի այն ունակ լինի երկու տարվա ընթացքում ռոտացիաներով տեղաբաշխել և պահպանել առնվազն մեկ վաշտ:
Գործող. 4.	Ստորաբաժանումների կազմավորման և ուսուցման ընթացքում ձեռք բերված փորձն օգտագործել որպես կատարյալ տարր՝ ուսուցման կատարելագործման և ՁՈւ այլ ստորաբաժանումների աստիճանական վերափոխման ապահովման համար:
2.3.2.	Մեկ խաղաղապահ բրիգադի կազմավորում
Գործող. 1.	Ստեղծել մեկ խաղաղապահ բրիգադ՝ օգտագործելով ՆԱՏՕ-ի չափանիշները: Բրիգադի մարտական ծառայությունների ապահովումը (թիկունքային՝ սնունդ, մատակարարումներ, պահպանում, վերանորոգում, ինչպես նաև բժշկական աջակցություն, ՌՔԿ պաշտպանություն և ռազմական ոստիկանություն) պետք է հնարավորություն տա, որ բրիգադն ունակ լինի երկու տարվա ընթացքում ռոտացիաներով տեղաբաշխել և պահպանել մեկ գումարտակ:
2.3.3.	Ինքնագնահատողների խումբ
Գործող. 1.	Օպերատիվ կարողությունների հայեցակազմի շրջանակներում ստեղծել ինքնագնահատողների մեկ խումբ՝ ՆԱՏՕ-ի ղեկավարած ԳԽԽ գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումների ինքնագնահատման համար՝ որպեսզի այս ստորաբաժանումները կարողանան սերտիֆիկացվել ՆԱՏՕ-ի համապատասխան մեխանիզմների միջոցով:

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
2.3.4.	Զորավարժությունների պլանավորում
Գործող. 1.	Օպերատիվ կարողությունների հայեցակարգով ինքնագնահատումներին, խաղաղապահ գումարտակի, իսկ այնուհետև խաղաղապահ բրիգադի կարողությունների շարունակական զարգացմանը և ՆԱՏՕ/ԳԽԽ զորավարժությունների պլանավորման փուլում ավելի ակտիվ ներգրավվածությանն աջակցելու նպատակով, պատրաստել զորավարժությունների պլանավորող մասնագիտությամբ սպաներ և ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն:
2.3.5.	Գործողությունների օպերատիվ պլանավորում
Գործող. 1.	Խաղաղապահ գործողությունների պլանավորման գործընթացին ավելի ակտիվ մասնակցության և ՆԱՏՕ-ի շտաբային տարբերում շտաբային սպաների նշանակման նպատակով անհրաժեշտ փորձագիտական խորհրդատվության ստացում:

2.4 Անձնակազմի ուսուցում և կառավարում

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
2.4.1.	Ավագ սպայակազմի դասընթացների զարգացում
Գործող. 1.	Մշակել ավագ սպաների՝ գնդի և բրիգադի հրամանատարական պաշտոնների ստանձնումը նախապատրաստելու ուսումնական ծրագրեր և դասընթացներ և նվազեցնել կախումը օտարերկրյա ուսումնական հաստատություններից:
Գործող. 2.	Կատարելագործել դասախոսական կազմը, որը ավագ սպաների համար կապահովի գնդի և բրիգադի հրամանատարական մակարդակի ուսուցում:
Գործող. 3.	Որոշել այս դասընթացների համար անհրաժեշտ ենթակառուցվածքները և սարքավորումները:
Գործող. 4.	Որոշել այս դասընթացների մշակման և իրականացման համար անհրաժեշտ մոտավոր ծախսերը:
2.4.2.	Կրթական համակարգի վերանայում
Գործող. 1.	Խորհրդատվության ստացում՝ կրտսեր սպայական կազմի կրթական ծրագրի կատարելագործման համար:
Գործող. 2.	Խորհրդատվության ստացում՝ ենթասպայական կազմի կրթական ծրագրի կատարելագործման համար:
Գործող. 3.	Խորհրդատվության ստացում՝ սերժանտական կազմի կրթական ծրագրի կատարելագործման համար:
2.4.3.	Ուսումնական ծրագիր
Գործող. 1.	ԶՈՒ տարբեր զորատեսակների համար մշակել նոր, ստանդարտ տարեկան ուսումնական ծրագիր և ստեղծել գնահատման մի մեխանիզմ, որը կբացահայտի, թե որքանով են իրականացվել սահմանված չափանիշները:
Գործող. 2.	Մշակել ուսումնական ծրագիր ցամաքային ուժերի, ավիացիայի և ՀՕՊ զորքերի գումարտակային մակարդակի ստորաբաժանումների համար:
2.4.4.	Անձնակազմի կառավարման համակարգի բարեփոխումներ
Գործող. 1.	Գործող համակարգի կատարելագործման նպատակով ստանալ որոշակի հաստիքներում պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ որակավորման և ուսուցման չափանիշների (արտերկրում ստացած ուսուցումը ներառյալ), յուրաքանչյուր հաստիքի հստակ աշխատանքային գործառնությունների մշակման, յուրաքանչյուր հաստիքում ծառայության տևողության, նոր հաստիքի չնշանակվելու դեպքում նախքան զորացումը կոչումների կրման տևողության վերաբերյալ խորհրդատվություն:
Գործող. 2.	Ստեղծել ստանդարտ ֆինանսական բավարարման (աշխատավարձերի) դասակարգում՝ ըստ հաստիքների (զինվորական և քաղաքացիական անձնակազմերի համար), ինչպես նաև սահմանել հավելավճարների հատկացման սանդղակ՝ հատուկ որակավորումների առկայության կամ հատուկ պարտականությունների իրականացման դեպքում, մշակել կրթական և ուսումնական չափանիշներ, որի շնորհիվ կապահովվի ռազմական որակավորումների ճանաչումը քաղաքացիական կրթական համակարգում, սահմանել զորացման, վերաբնակության և զորացրված անձնակազմի սոցիալական հատկացումների (այդ թվում կենսաթոշակների) իրականացման ընթացակարգեր:
Գործող. 3.	Կատարելագործել անձնակազմի համապատասխան փորձի և հմտությունների որոշման գործող համակարգը՝ անձնակազմի ծառայողական առաջխաղացման և նոր պաշտոնների նշանակման կարգի ու չափորոշիչների բարելավման նպատակով:
Գործող. 4.	Կատարելագործել սպաների, սերժանտական կազմի, զինվորների և քաղաքացիական անձնակազմի գնահատման գործող համակարգը, որը ընտրության հիմք կլինի պահանջներին համապատասխանող ծառայողների առաջխաղացման համար՝ այդպիսով հասնելով առավելագույն թափանցիկության և արդարության: Այս համակարգի շնորհիվ անձնակազմը կըմբռնի, թե ինչ է իրենից ակնկալվում և ինչ պետք է անի՝ հմտությունների զարգացման համար:

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
2.4.5.	Լեզվի ուսուցում
Գործող. 1.	Կատարելագործել լեզվի ուսուցման կարողությունները Ռազմական Ակադեմիայում:
Գործող. 2.	Կատարելագործել լեզվի և ռազմական տերմինաբանության ուսուցումը խաղաղապահ ստորաբաժանումում
Գործող. 3.	Անձնակազմի համար լեզվի լրացուցիչ ուսուցման նպատակով շարունակել օգտագործել երկկողմ օժանդակությունը
Գործող. 4.	Ստեղծել լեզվի ուսումնական կենտրոն: Մշակել լեզվի մասնագիտացված ուսուցման դասընթաց՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում ընդգրկված ավագ սպայական կազմի և զեներալների համար:
Գործող. 5.	Համապատասխան անձնակազմի համար հիմնել անգլերեն լեզվի տեսավորման համակարգ՝ համաձայն ՄՏԱՆԱԳ 6001-ի:

2.5 Հրամանատարության, վերահսկողության և թիկունքային ապահովման երկարաժամկետ ծրագրեր

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
Գործող. 1.	Օգտագործելով Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքները՝ մշակել հրամանատարության-վերահսկողության-կապի (ՀՎԿ) երկարաժամկետ ծրագիր և սահմանել ՀՎԿ համակարգերի կառուցվածք (ներառելով կապի, նավիգացիայի, իդենտիֆիկացիայի և ավտոմատացված տեղեկատվական համակարգերը, ինչպես նաև դրանց ֆունկցիոնալ ծառայությունները), ինչն անհրաժեշտ է Ռազմավարական պաշտպանական վերանայման միջոցով մատնանշված օպերատիվ պահանջներին համապատասխանելու համար: Այս խնդիրների իրականացման օժանդակելու նպատակով Հայաստանը կաջակցի ՆԱՏՕ-ի Խորհրդակցությունների, հրամանատարության և վերահսկողության գործակալության (NC3A) ՆԱՏՕ-ի ցանցային կարողությունների իրագործման ու փոխգործունակության ենթակոմիտեի (NNEC & Interoperability Sub-group) միջոցառումները, կմասնակցի ՆԱՏՕ-ի Կոալիցիայի կապի ու տեղեկատվական համակարգերի փոխգործունակության տեսավորման միջոցառումներին և փորձագիտական աջակցություն կստանա ՆԱՏՕ-ի Խորհրդակցությունների, հրամանատարության և վերահսկողության գործակալությունից (NC3A):
Գործող. 2.	Օգտագործելով Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքները՝ մշակել թիկունքային (ներառյալ բժշկական) ապահովման երկարաժամկետ ծրագիր, ինչն անհրաժեշտ է Ռազմավարական պաշտպանական վերանայման միջոցով մատնանշված օպերատիվ պահանջներին համապատասխանելու համար:
Գործող. 3.	Աստիճանական զարգացմամբ իրականացնել անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում և արդիականացում՝ յուրաքանչյուր փուլում ցուցադրելով նոր կարողություն և փոխգործունակություն:

2.6 Ազգային ռազմարդյունաբերական համալիրը և պաշտպանությանը դրա համապատասխանությունը

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
Գործող. 1.	Իրականացնել առկա ռազմարդյունաբերական համալիրի գնահատում՝ դրա օգտակարությունն ու պաշտպանությանը համապատասխան լինելը որոշելու նպատակով:
Գործող. 2.	Ապահովել դրա հնարավոր վերակազմման կամ կազմալուծման վերաբերյալ առաջարկներ:

2.7 Սահմանային անվտանգություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
Գործող. 1.	Դաշինքի անդամ և (կամ) գործընկեր երկրների հետ համագործակցությամբ իրականացնել սահմանային անվտանգության կառույցում առկա ընթացակարգերի և պրակտիկայի հետազոտում:
Գործող. 2.	Այդ հետազոտման արդյունքների հիման վրա որոշել սահմանային անվտանգության արդյունավետության բարձրացման համար փոփոխման ենթակա ընթացակարգերն ու պրակտիկան: Նույն հետազոտման հիման վրա որոշել առաջնային, այդ թվում ՁՈԶ կոմպոնենտների հայտնաբերման սարքավորումները, որոնք անհրաժեշտ է արդիականացնել կամ ձեռք բերել՝ սահմանային անվտանգության կատարելագործման նպատակով:
Գործող. 3.	Կազմել առաջնային համարվող սարքավորումների արժեքի մոտավոր հաշվարկներ և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործում օժանդակության համար դիմել Դաշինքի անդամ կամ գործընկեր երկրներին կամ էլ օգտագործել ազգային միջոցները:

Գլուխ 3. Հասարակության իրազեկում, գիտություն, բնապահպանություն և քաղաքացիական ճգնաժամերի պլանավորմանն առնչվող հարցեր

3.1 Հասարակական տեղեկատվություն անվտանգության և պաշտպանության վերաբերյալ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.1.1.	Մշակել Ազգային տեղեկատվական ռազմավարություն Հայաստան-ՆԱՏՕ գործողությունների ծրագրի վերաբերյալ՝ որպես պաշտպանական և անվտանգության բարեփոխումների աջակցություն
Գործող. 1.	<ul style="list-style-type: none"> - Ջարգացնել տեղեկատվական արշավ. - Միջգերատեսչական հանձնաժողովում ստեղծել հասարակական տեղեկատվության հատուկ հանձնախումբ, - Կանոնավոր կերպով պատրաստել և հեռարձակել ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ ՆԱՏՕ-ի վերաբերյալ, - Կատարելագործել ՊՆ հասարակական տեղեկատվության մասնագետների կարողությունները՝ նրանց վերապատրաստման միջոցով:
3.1.2.	Ընդլայնել հասարակության իրազեկությունը ՆԱՏՕ-ի վերաբերյալ
Գործող. 1.	Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի բացում:
Գործող. 2.	ՆԱՏՕ-ի գրքային ստեղծերի բացում մարզերի համալսարաններում:
Գործող. 3.	<ul style="list-style-type: none"> - ՆԱՏՕ-ի Հասարակական դիվանագիտության տնօրինության հետ համատեղ կազմակերպել սեմինարներ, աշխատաժողովներ և համաժողովներ՝ հատուկ լսարանի համար (տեղական իշխանություններ, համալսարաններ, լրագրողներ, հասարակական կազմակերպություններ): - Հայաստանում կազմակերպել «ՆԱՏՕ-ի շաբաթ»:

3.2 Գիտություն, Հասարակության արդի մարտահրավերների կոմիտե

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.2.1.	«Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրի ներքո կազմակերպված միջոցառումների միջոցով կենտրոնանալ կարևորագույն անվտանգության առաջնահերթությունների վրա:
3.2.1.1.	Նպաստել Հարավային Կովկասում առավել անվտանգությանն ու կայունությանը՝ «Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրի շրջանակներում համագործակցելու միջոցով:
Գործող. 1.	Շարունակել մասնակցությունը «Վիրտուալ մետաքսե ճանապարհ» նախագծին՝ կենտրոնանալով Հայաստանում և Հարավային Կովկասի այլ երկրներում համակարգչային ու գիտահետազոտական ցանցերի ընդլայնման վրա:
Գործող. 2.	«Գիտություն հանուն խաղաղության» նախագծի զարգացման նպատակով տարածաշրջանային ու ՆԱՏՕ-ի անդամ երկրների փորձագետների և ՆԱՏՕ-ի քարտուղարությունների հետ աշխատանքներ իրականացնել ազգային և տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության ապահովման ուղղությամբ:
Գործող. 3.	Շարունակել մասնակցել Հարավային Կովկասի «Գետերի մոնիտորինգ» նախագծին՝ լուծելու ջրային պաշարների կառավարման կրիտիկական խնդիրները:
Գործող. 4.	Իրականացնել տարածաշրջանային համագործակցության միջոցառումներ՝ կենտրոնանալով Հարավային Կովկասում մարդկանց առողջության ռիսկային գործոններին առնչվող խնդիրների վրա:
3.2.1.2.	Կոնկրետ համագործակցային միջոցառումների միջոցով արձագանքել Հայաստանի ազգային գիտությանը և տեխնոլոգիական առաջնայնություններին:
Գործող. 1.	Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ կենտրոնանալով բիոահաբեկչության սպառնալիքի վրա:
Գործող. 2.	Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ նպաստելով Հայաստանում սննդի շղթայի անվտանգությանը:
Գործող. 3.	Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների փորձագիտության ընդլայնման նպատակով:
3.2.2	Հասարակության արդի մարտահրավերների կոմիտեի հովանու ներքո իրականացնել տարածաշրջանային և ազգային միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն Հայաստանի հիմնական առաջնահերթություններին:

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
Գործող. 1.	Տրանսսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա աղտոտման ազդեցության գնահատման իրականացման նպատակով մասնակցել «Տրանսսահմանային կոնտեքստում թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա» թեմայով նախնական ուսումնասիրություններին՝ հաշվի առնելով բնապահպանության վերաբերյալ առկա միջազգային կոնվենցիաները:
Գործող. 2.	Ընդլայնել Հայաստանի փորձագետների մասնակցությունը Հասարակության արդի մարտահրավերների կոմիտեի (CCMS) ընթացիկ միջոցառումներին:

3.3 Քաղաքացիական ճգնաժամների կառավարում և ճգնաժամային պատրաստականություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.3.1.	Ճգնաժամային պատրաստականության կատարելագործում
Գործող. 1.	Հիմնվելով ռիսկերի ճիշտ գնահատման վրա՝ մշակել ռադիոլոգիական, քիմիական, կոնսարանական և միջուկային ճգնաժամներին ու ահաբեկչական գործողություններին արձագանքելու ծրագրեր: Քաղաքացիական աղետների պլանավորման գործողությունների ծրագրի իրականացումը փրկարարական ծառայությանը թույլ կտա արդյունավետորեն արձագանքել բոլոր աղետներին և ապահովել սեփական քաղաքացիների, օտարերկրյա ներկայացուցիչների ու միջազգային կազմակերպությունների անձնակազմի անվտանգությունը:
Գործող. 2.	Ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում կազմակերպվող համատեղ աշխատաժողովների, զորավարությունների և դասընթացների միջոցով ընդլայնել աղետների արձագանքման ուժերի մասնագիտական պատրաստականությունը՝ նպատակ ունենալով Հայաստանի փրկարարական համակարգը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին և կարողանալ տրամադրել միջազգային փրկարարական օժանդակություն:
Գործող. 3.	- Իրականացնել փորձի փոխանակում տարատեսակ քաղաքացիական աղետների կառավարման տարբեր ոլորտներում, - Պահանջվող մակարդակի օպերատիվ պատրաստականության ու փոխգործունակության հասնելու նպատակով մասնակցել ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպվող զորավարություններին, - Փրկարարական համակարգի անձնակազմի համար կազմակերպել անգլերենի դասընթացներ:
3.3.2.	Ճգնաժամների արձագանքման համակարգի կատարելագործում
Գործող. 1.	Ձևավորել քաղաքացիական ճգնաժամների կառավարման տեղեկատվական համակարգ, որը կհանդիսանա աղետների կամ քաղաքացիական ճգնաժամների արձագանքման ռեսուրսների լծակ և համադրման մեխանիզմ՝ իր մեջ ներառելով տեղեկատվական հոսքի մշակումը, կանոնակարգումը և կառավարումը՝ այդպիսով այդ ռեսուրսները դարձնելով ավելի հասանելի:
Գործող. 2.	Ստեղծել համաճարակներին արձագանքելու համակարգ՝ հիմնվելով գոյություն ունեցող բժշկական հաստատությունների տեխնիկական և մարդկային ռեսուրսների վրա: Մասնակցել աշխատաժողովների, դասընթացների և հանդիպումների այն երկրներում, որոնք ունեն նմանատիպ արձագանքման համակարգ:
Գործող. 3.	Կատարելագործել կապերն ու փոխգործունակությունը Աղետների արձագանքման համադրման Եվրաստլանտյան կենտրոնի հետ և արդիականացնել ՌՔԿ արձագանքման կարողությունների ազգային գույքը:
3.3.3.	Ճգնաժամային կապ
Գործող. 1.	Վերանայել ճգնաժամային իրավիճակներին վերաբերող պետական տեղեկատվական քաղաքականությունը և մանրամասն ծրագրերը:
Գործող. 2.	Զարգացնել ճգնաժամների արձագանքմանը վերաբերող տեղեկատվության հավաքման և վերլուծության միջոցառումները, քաղաքաշտպանության վերաբերյալ բնակչության տեղեկացման ռազմավարությունը, հնարավոր պատահարների ոլորտում ՆԱՏՕ-ի և ՆԱՏՕ/ԳհԽ առկա նախագծերի վերաբերյալ հասարակական իրազեկությունը և ընդլայնել հասարակական պատրաստականությունը:
Գործող. 3.	Միջազգային փորձի հիման վրա մեկնարկել է մի ծրագիր՝ նպատակ ունենալով ստեղծել «Արտակարգ ալիք» տեղեկատվական կենտրոն, որը ամբողջ համապատասխան տեղեկատվությունն ու աղետների արձագանքման վերաբերյալ իրազեկումը կինտեգրի մեկ մասնագիտացված կառույցում: Արտակարգ իրավիճակներում այս կառույցը բնակչությանը, զանգվածային լրատվության միջոցներին և կառավարությանը կտրամադրի վստահելի ու հրատապ տեղեկատվություն: «Արտակարգ ալիք» տեղեկատվական կենտրոնը ներառում է տեղեկատվական կենտրոն, ինտերնետային կայք, հեռուստատեսային և ռադիոընկերություն և օրաթերթ:

**Գլուխ 4 . Վարչական, «պաշտպանողական անվտանգության» և
ռեսուրսներին առնչվող հարցեր**

4.1 Վարչական խնդիրներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.1.1.	Համադրման, փոխգործողության և աջակցող ծրագրերի համահունչ ղեկավարման միջոցով ապահովել ԱԳԳՕ արդյունավետ իրագործում:
Գործող. 1.	Պատասխանատու մարմնի միջոցով ապահովել համապատասխան միջգերատեսչական համադրում:
Գործող. 2.	Համապատասխան մակարդակներում ապահովել փոխգործողություն ՆԱՏՕ-ի, այդ թվում ՆԱՏՕ-ի կոնտակտային դեսպանության հետ և աշխատանքային պայմաններ ապահովել ՆԱՏՕ-ի փոխգործողության պաշտոնյայի համար:
Գործող. 3.	Նախատեսել հայ սպաների նշանակում ՆԱՏՕ-ի Միջազգային քարտուղարությունում (ներառյալ Ադետների Եվրաստլանտյան արձագանքման համադրման կենտրոնում) և Միջազգային ռազմական շտաբի Գործընկերության համադրման օղակներում:
Գործող. 4.	Նշանակել Հայաստանի փոխգործողության ներկայացուցիչ Դաշնակցային վերափոխումների հրամանատարությունում:

4.2 Ռեսուրսներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.2.1.	Ապահովել ԱԳԳՕ աջակցման ծրագրերի և միջոցառումների համապատասխան ֆինանսավորումը
Գործող. 1.	Նախատեսել և հատկացնել համագործակցության այս ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական ու մարդկային ռեսուրսները:

4.3 Պաշտպանողական անվտանգություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.3.1.	Լիովին իրականացնել Հայաստանի կառավարության և ՆԱՏՕ-ի միջև ստորագրված անվտանգության վերաբերյալ համաձայնագիրը:
Գործող. 1.	- Պահպանել Հայաստանի իշխանությունների և ՆԱՏՕ-ի միջև ստորագրված «Անվտանգության մասին» համաձայնագրով պահանջվող ՆԱՏՕ-ի անվտանգության նվազագույն չափանիշները: - Տեղեկատվության հոսքին և պահանջներին համապատասխան շարունակել ընդլայնել գոյություն ունեցող ռեզիստրային համակարգը: - Շարունակել սահմանել այն պաշտոնները, որոնց համար պահանջվում է ՆԱՏՕ-ի գաղտնիության թույլտվություն:
Գործող. 2.	- Ազգային անվտանգության ծառայության աշխատանքի կատարելագործման նպատակով ընդլայնել համագործակցությունն այլ երկրների համապատասխան ծառայությունների հետ: - ՆԱՏՕ-ի գաղտնի տեղեկատվությամբ աշխատող հայ փորձագետների համար հիմնել ու իրականացնել անվտանգության վերաբերյալ կրթական և ուսումնական ծրագրեր՝ նպատակ ունենալով կատարելագործել ԱԱԾ ընդհանուր աշխատանքը:
Գործող. 3.	Ստեղծել տեղեկատվության կրիպտոգրաֆիկ պաշտպանության էլեկտրոնային համակարգեր, ցանցեր և կապուղիներ:

Ռազմաքաղաքական/տնտեսական բյուջեներ

Աղյուսակում ներկայացված են ոչ թե կազմակերպությունների ռազմական/քաղաքացիական բյուջետային պոստենցիալները, այլ դրանց անդամակցող երկրների ազգային ցուցանիշների համադրումները:

Աղյուսակ 1

2006թ. վիճակագրություն

Կազմակերպություն/երկիր	ՀՆԱ ¹ , \$տրլն	Ռազմ. բյուջե, \$մլրդ	Բնակչություն, \$մլն
ՆԱՏՕ ²	25.9	768	866
ՇՀԿ ³	10.64	59.5	1.512
ՀԱՊԿ/ՕՃԿԵ ⁴	1.86	24.9	211
ԱՄՆ	12.36	561*	298
Չինաստան	8.859 (3)	34.9	1.313
Ռուսաստան	1.589 (0.8)	23.7	143

* ԱՄՆ ռազմական բյուջեի ցուցանիշում ներառված են Աֆղանստանում և Իրաքում տրամադրվող ռազմական/հակահաբեկչական ծախսերը (շուրջ \$100 մլն):

() փակագծերում բերված է այլ աղբյուրների վիճակագրություն:

Ռազմական բյուջե

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել համաշխարհային ռազմականացման արագ զարգացող տեմպերին: Արևմտյան վերլուծական-փորձագիտական կենտրոնները միանշանակորեն հավաստիացնում են, որ վերջին տասնամյակում էապես աճել են համաշխարհային պաշտպանական/ռազմական ծախսերը: Այսպես, *Օբսիվալ* միջազգային հիմնադրամի տարեկան հաշվետվությունում մասնավորապես նշվում էր, որ 2006թ. համաշխարհային պաշտպանական ծախսերն արձանագրել են աննախադեպ ցուցանիշ՝ շուրջ \$1.059 տրլն, ինչը գերազանցում էր նույնիսկ 1988թ. (սառըպատերազմյան շրջանում) գրանցված ռեկորդը՝ շուրջ \$1.03 տրլն: Ընդ որում՝ համաշխարհային պաշտպանական ծախսերի ավելի քան կեսը (շուրջ 52.9%) բաժին է ընկնում միայն Միացյալ Նահանգներին: Ստոկհոլմի խաղաղության հետազոտությունների միջազգային ինստիտուտի (*SIPRI*) տվյալներով՝ 2003թ. ԱՄՆ-ին բաժին էր ընկնում համաշխարհային պաշտպանական ծախսերի շուրջ 47%-ը:

Մարդկային ռեսուրսներ

Ելնելով ներկայիս ժողովրդագրական գլոբալ գործընթացներից՝ երկրագնդի մարդկային ռեսուրսները տրամաբանորեն կուտակվում են ասիական մայրցամաքում, իսկ ավելի ստույգ՝ Հարավկենտրոնական և Հարավարևելյան Ասիայում: Աղյուսակում բերված կազմակերպություններից բնակչության թվաքանակով մասնավորապես առաջատար է ՇՀԿ-ն (1.512 մլրդ բնակիչ)՝ գերազանցապես ի հաշիվ Չինաստանի ցուցանիշների: 2006թ. դրությամբ, միայն Չինաստանի բնակչությունը շուրջ 1.314 մլրդ մարդ էր՝ կազմելով երկրագնդի ողջ բնակչության 20.1%-ը:

¹ Համախառն ներքին արդյունքի ցուցանիշները ներկայացված են 2005թ. վիճակագրությամբ:

² ՆԱՏՕ-ի անդամ երկրներն են՝ Բելգիա, Մեծ Բրիտանիա, Կանադա, Լյուքսեմբուրգ, Դանիա, Ֆրանսիա, Իսլանդիա, Իտալիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, ԱՄՆ, Հունաստան, Թուրքիա, Գերմանիա, Իսպանիա, Չեխիա, Լեհաստան, Հունգարիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Բուլղարիա: Ներկայումս կազմակերպությանը ձգտում են անդամակցել Խորվաթիան, Մակեդոնիան, Սերբիան, Վրաստանը, Ուկրաինան և Ալբանիան:

³ ՇՀԿ-ին անդամակցում են Չինաստանը, Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանն ու Ուզբեկստանը: ՇՀԿ-ում դիտորդի կարգավիճակ ունեն 4 երկիր՝ Հնդկաստանը, Իրանը, Պակիստանը և Մոնղոլիան:

⁴ ՀԱՊԿ անդամ երկրներն են՝ Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Տաջիկստան և Ուզբեկստան (վերջինս անդամակցում է 2006թ. օգոստոսից):